ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

[Հայերեն - Armenian – أرميني]

Աբդուլլահ բն Հեդի Ալ-Կահտանի

Թարգմանությունը:

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Աննա Ռ. Հակոբ

Ստուգող համձնաժողով:

Աբու Առամ

حقوق المرأة : نظرة تاريخية

عبد الله بن هادي القحطاني

ﰉﰈ

ترجمة:

المركز الأوروبي للدراسات الإسلامية

& آنا ر. يعقوب

مراجعة: أبو آرام

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Ես շատ երախտապարտ եմ Ամենաբարձրյալ Ալլահին Իր ուղղորդության և անսահման բարիքների համար: Առանց Նրա առաքինության, ոգեշնչման և անսահման բարիքների, ես կլինեի անօգուտ:

Իմ անկեղծ շնորհակալությունը այն շատ մարդկանց, ովքեր օգնեցին իրականացնել այս գիրքը .

- Իմ անկեղծ եղբայր դոկ, Աբդուլլահ Աբու –Իշին, ով վերանայեց վերջնական նախագիծը: Նրա շարժառիթ հանդիսացող խրախուսական խոսքերը և ուղղորդությունը մեծագույն օգնություն էին:
- Քույր Օմ Մուհամմեդին, սխալների մանրակրկիտ ուղղումների և փաստարկների շարանին հետևելու համբերության համար: Թող Ալլահը հատուցի նրան հոգնեցուցիչ և ժամանակատար աշխատանքի դիմաց:
- Իմ սիրալիր երախտագիտությունը կանանց, ովքեր ոգեշնչեցին գրել այս գիրքը և մշտապես ներկա էին անհրաժեշտ օժանդակության և դուայի համար, իմ հանգուցյալ տատիկին, իմ մայր Ֆաթիմային, կին Աիշային, քույր Ամրային, իմ երկու դուստրերին Ռիջին և Ֆաթիմային և Մունային, Իսլամի մեջ իմ քույր Մոնային:

ՁՕՆ

Ես. *Ձոնում եմ, Կնոջ Իրավունքները, Պատմական Հեռանկարից իմ գրքի երկրորդ խմբագրությունը, մի մարդու, ով կանգնած էր այս գրքի առաջին հրատարակման ետևում: Նա այլևս մեր աշխարհում չէ, սակայն նրա ջանքերը Իսլամի մասին տեղեկություն տալու դեռ բավական ակնհայտ է: Ես խնդրում եմ Ալլահից հատուցել նրան իր ջանքերի համար և միավորել մեզ մեր Մարգարեյի հետ Դրախտում:*

Տարբեր հասարակություններ այժմ ստիպված են դիրքորոշում ունենալ, որոնք կապված են իրենց կանանց խնդիրների հետ: Գրականության մեջ դժվար է նշել, որ Իսլամը կնոջ իրավունքների մասին խոսել է ավելի քան 1400 տարի առաջ, ավելի վաղ շատ մակույթների մեջ այն դարձավ լուրջ մտահոգություն, մանավանդ, վերջերս արևմտյան հասարակության մեջ:

Կանանց իրավունքների խնդիրը վերջին տասնամյակների ընթացքում ավելի շատ ուշադրություն է ստանում արևմտյան և նմանատիպ հասարակություններում: Միայն Մարգարե Մուհամմեդը Խ.Ա.Ո.Ն, Աստվածային Հայտնության միջոցով ի վիճակի էր վերականգնել կանանց առաքինությունը և իրավունքները, ովքեր դարեր առաջ ապրում էին շատ ծանր հանգամանքներում, մինչ այլ

ազգերի կանայք ստանում են իրենց իրավունքների բաժինը:

Շատ ֆեմինիստ հեղինակներ ոգևորությամբ դատապարտում էին Մահմեդական Կանանց վերաբերմունքը: Երբեմն, նրանք խառնում էին անբիծ Իսլամական ուսմունքների և որոշ մահմեդականների անպատասխանատու անձնական կամ մշակութային սովորությունները: Ամեն դեպքում, ոմանք դիտավորյալ կարող են նախապաշարել իրենց ստացված աշխատանքի հասարակայնությունը և միգուցե, իրենց ստացած բարձր եկամուտը, որպես արդյունքն իրենց գրքերի վաճառքի: Այսօր այդ բիզնեսը զարգանում է, մինչդեռ անարդար կերպով հարձակում են գործում Իսլամական արմատական ուսմուքների վրա: Այսպիսի աշխատանքները ուշադրություն չեն դարձրել Իսլամի ուսմունքներին: Արդյուքնում, նրանք ոչ մի ջանք չեն գործադրել տարբերակել որոշ մահմեդականների վարքը և այն կրոնը, որի մեջ նրանք շատ տգետ են:

Ֆեմինիստ հեղինակություններին ավելի լավ կլինի կենտրոնանալ ամբողջ աշխարհի կանանց, երեխաների և ընտանիքների ճղճիմ իրավիճակին, որոնք ներառում են արևմտյան երկրները: Չնայած արևմտյան կանանց տաժանակիր տանջանքի հաղթելու և ապահովելու իրենց իրավունքները, վերջին վիճակագրությունը և ակադեմիական հետազոտությունը, միայն բացահայտում են կանանց և երեխաների խտրականության և անհանգստության զայրույթային արդյուքները: Կանանց և տղամարդկանց անարդար մրցակցությունը արական գերակշռական աշխատանքային աշխարհում, բացասական արդյուքն է տվել ամենակարևոր

հաստատության, ընտանիքիքի վրա: Ժամանակակից հասարակությունների մեջ կինը իրավունք ունի հարգանքի և պատվի միայն այնքանով, որքանով նա հաջողության է հասել ներկայացնելով տղամարդու հատկությունները, միևնույն ժամանակ հանրությանը ցուցադրելով իր ծայրահեղ գեղեցկությունը և գրավչությունը: Արդյունքում, երկու սեռերի դերը ժամանակակից հասարակության մեջ մանրակրկիտ շփոթմունք է:[1]

Կարևոր հիմնավորումներից մեկը, որը թաքնված է ենթարդելու այս հետազոտությունը, մի արք հեղինակների անարդար սխալ ներկայացումն է Իսլամական ուսմուքնի, որը կապված է կանանց հետ: Նրանք միայն կենտրոնանում են հատվածների վրա, որոնք դուրս են բերվել և տեքստերից և համատեքստերից: Կամ նրանք մեղադրում են Իսլամի որոշ տգետ մահմեդականներին, իրենց անընդունելի փորձի համար: Այդ հեղինակներից շատերը օբյեկտիվ կերպով չեն իրականացնում լուրջ արդար համեմատական հետազոտություն կապված կնոջ դիրքի հետ Իսլամի ուսմունքի մեջ և այլ կրոնների և գաղափարախոսությունների մեջ:

Միջոցներով,այս հետազոտության մեջ ներկայացվող տեղեկությունից, ընթերցողը կարող է ինքն իրեն եզրակացնել այս սուրբ գրքերի և ուսմունքների ամուր հարաբերակցությունը և սխալ վերաբերմունքը, որը զգում են այս հասարակությունների կանայք դարեր շարունակ: Պարզապես, որովհետև տղամարդիկ կառավարում են կանանց, մինչդեռ մեղադրում են Աստուն և ուստի կոչում են «Աստվածային»: Երբ խոսքը վերաբերում է Իսլամին,

[1] Մարիամ Ջամիլաh, Իսլամը Տեսականում և Գործնականում, Հ. Ֆարուք Միավորում Լահոր, 1983 էջ. 85

հավասարությունը անշրջելի է: Իսլամական ուսմունքները չեն անրադառնում կանանց նկատմամբ որոշ մահմեդականների սխալ վարվեցողության: Այնուհանդերձ, նրանք մեղադրում են Իսլամը: Էդվարդ Սաիդը ակնարկեց այս անարդար հայտարարությունը, վկայակոչելով Վ.Ս. Նայպաուլի անկողմնակալ գրվածքը Իսլամի մասին ասելով. «Նայպաուլի և նրա ընթերցողների համար, «Իսլամը» ինչ որ կերպ դարձել է ծածկոց ամենի, ինչը մի մասը դատապարտում է քաղաքակիրթ և Արևմտյան բանականության տեսանկյունից»:[2] Ալլահը մարդուն չի տվել օրենք հրապարակելու կատարյալ ազատություն: Փոխարենը, Նա ներկայացնում է լավ սահմանված ուղղորդում, պաշտպանելու մարդ արարածին շեղվելուց և հետևաբար ոտնահարում է ուրիշների իրավունքները:

Այս գրքի նպատակն է, կանանց իրավունքների պատմական ակնարկ ապահովել աշխարհի հիմնական կրոնների մեջ: Ի համեմատություն Իսլամական տեսանկյունի ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել կանանց կարգավիճակին ժամանակակից արևմտյան հասարակությունների մեջ: Ամեն դեպքում, ես մտադրված չեմ ապահովել հաշիվ այսպիսի ծավալուն թեմայի, այլ ներկայացնել ընդհանուր շրջանակ, որտեղ պատմական տեսանկյունից կարելի է կազմել ամբողջական պատկերացում կապված կնոջը հետ:

---

[2] Էդվարդ Սաիդ, Ծածկող Իսլամ, Վինթաջ 1997, էջ. 8 Սաիդը նույնպես նշել է, որ ՛Ասիդուսի հետազոտությունը ցույց է տվել, որ հազիվ գոյություն ունի մի հեռուստատեսային շոու, որը չի ցուցադրում դրվագներ լիԻսլամի և մահմեդականների դեմ ռասսայականությամբ և ծաղրանքով:

ՄԱԿ- ի կողմից արված վերջին զեկույցը նշում է, որ Հնդկաստանում կանայք կանգնած են մի շարք խնդիրների առջև, ներառելով թերսնումը, աղքատ առողջապահությունը և կրթության պակասը: Այս ազդում է կանանց և տղամարդկանց քանակական հարաբերակցության վրա, 960 կին 1000 տղամարդու դիմաց:[3] Մեկ այլ խնդիր է, այն, որ տղամարդիկ բարձր օժիտ են պահանջում հարսնացուի ընտանիքից, որը մեծ տնտեսական ճնշում է հանդիսանում հարսնացուի ընտանիքին:[4] Այսպիսի անարդար պրակտիկան հանդիսանում է մանկասպանության աճող տեմպերի գործոններից մեկը: Ի շնորհիվ ուլտրաձայնային ախտորոշման, իգական սեռի երեխաները բախվում են

[3] BBC online 2/7/2000

[4] Ֆրեդ Փլոգ և Դանիել Գ. Բեյթս. Մշակութային Մարդաբանություն: Նյու Յորք, Քնոփֆ, 1982, էջ. 209

հղիության արհեստական ընդհատման ավելի մեծ հավանականության: Կատարվում է հղիության արհեստական ընդհատման ընտրություն. որովհետև գերադասությունը տրվում է արական սեռի երեխաներին: Իգական սեռի մանկասպանությունը ընդհանուր սովորույթ է: Փաստորեն, ամուսնու մահից հետո Սաթի այրու այրելը, հինդուիզմի ուսմունքների մի մաս է, որը կնոջ նկատմամբ իրագործվող պատմական սովորույթ է:Այդ Հնդկաստանում լայն տարածում ուներ, մինչ 1930 թվականին Բրիտանական կառավարությունը արգելեց:

Իր «Ժամանակակից Հինդուիզմը» գրքի մեջ, Ուիլքինսը պնդում է, որ ամեն դեպքում Հինդուիզմի մեջ Ռուշթրա կանայք երբեք ազատություն ձեռք չեն բերի: Պարզապես, հարգարժան Հինդու Ավտար, Մանու ուսմունքները, որոնք կոչվում են Դհարմա Շասթրա սահմանում են, որ.

> Մի աղջկա, կամ երիտասարդ կնոջ կամ տարիքով կնոջ, ոչինչ
>
> պետք չէ, նույնիսկ բնակավայր, ըստ նրա սոսկ հաճույքի:
>
> Մանկության ընթացքում, իգական սեռի ներկայացուցիչը պետք է
>
> Կախված լինի սոսկ հորից, երիտասարդ տարներին ամուսնուց,
>
> Նրա տեր ամուսնու մահից հետո, իր որդիներից: Կինը չպետք է

> Անկախություն փնտրի: (Դհարմա Շասթրա, հատոր V, էջ. 162-3)[5]

Ըստ Մանու ուսմունքների, գոյություն ունեն որոշակի տեսակի էակներ, արժանի չեն որևէ իրավունքի.

> Երեք անձիք, կինը, որդին և ստրուկը, հայտարարվել է,
>
> Որ ըստ օրենքի, ընդհանուր առմամբ, նրանք չպետք է
>
> Ունենան իրենց սեփական ունեցվածքը: Ունեցվածքը,
>
> Որը նրանք կարող են վաստակել, պարբերաբար ստանում է
>
> Տղամարդը, որին նրանք պատկանում են:[6]

Ըստ Մանու ուսմուքների, կանանց նույնիսկ մերժում են իրենց անունից Հինդու աստվածներին երկրպագելու իրավունքը, նրանք պետք է աղոթեն իրենց ամուսինների անուններից:

> Կնոջը արգելվում է իր անունից աստվածներին մոտենալու
>
> Հարմարավետությունը: Ոչ մի զոհաբերություն չի
>
> Թույլատրվում առանձին իրենց ամուսիններից, ոչ մի

---

[5] Ու. Ջ. Ուիլքինս, Ժամանակակից Հինդուիզմը, Լոնդոն 1975, էջ. 180
[6] Ջորջ, Բուհլերգ, Մանու Օրենքը:Մոթիլալ Բանարսիդաս, Դելի ,1982, էջ. 326, Գլուխ VIII, տարբերակ 416

> Կրոնական ծես, ոչ մի պահք:[7]

Նրանք կարծես չունեն իրենց իսկ անհատականությունը: Նրանք ուղղակի ամրացված են տղամարդուն: Նրանց նաև չի թույլատրվում ընթերցել կրոնական գրքեր: Ըստ Մանու Դիարմա Շաստրայի.

> Կանանց համար ոչ մի սուրբ ծիսակարգ չի ներկայացվում սուրբ
>
> Տեքստերով, ուստի, օրենքը վճռված է; կանայք, ովքեր զուրկ են
>
> Իշխանությունից և Վեդայական տեքստերի իմացությունից,
>
> Այնքան պիղծ են, որքան կեղծիքը, այս կայուն կանոն է:[8]

Ըստ այս ուսմուքների, Դալիթ Վոյսը, փետրվարի 1-15,1994 թվականին զեկուցեց, որ Շանկարաչարի Փուրիի, Սվամի Նիսչալանդան հրապարակայնորեն կանգնեցրեց կնոջը Վեդա ընթերցելուց, որը տեղի էր ունեցել 1994 թվականի հունվարի 16-ին Կալկաթայում:[9]

Բրահմայականության հարկադրված խիստ կաստայական համակարգը, (ուսանած Հինդու հոգևորականները և ստորին կաստան), հանգեցրել է մյուս կաստաների դեգրադացիային:Այդ առավել ազդել է կանանց վրա, մանավանդ ստորին կաստաների: Դոկտոր Չաթերջին, 1993թվականին, Հնդկաստանում գտնվեղ Թայմս թերթին

---

[7] Ուիքինս, էջ. 181

[8] Բուհլերգ էջ. 330, Գլուխ IX, տարբերակ 18

[9] Մ Ձ. Ֆազլ ի, Հինդուական շովինիզմը և Մահմեդականները Հնդկաստանում: Աբու լ Քասիմ Հրատարակչատուն , Ջեդդահ, 1995թվական, էջ. 51

ներկայացրեց զեկույց, որտեղ նրանք դիմում են Դեվադասի համակարգին, կրոնական մարմնավաճառության, որոնք պարտադրում են քահանաները: «Աղքատ ստորին խավի աղջիկներին, ի սկզբանե վաճառում են մասնավոր աճուրդներում, այնուհետ նրանց նվիրաբերում են տաճարներին: Այնուհետ նրանց հանձնում են մարմնավաճառության:»[10] Հնդկաստանի, Թայմսի մեկ այլ զեկույցի մեջ, իր Նոյեմբերի 10-ի հոդվածի մեջ, 1987 թվականին հաստատում է Դավադասի համակարգի լայն տարածումը: Այս համակարգը ներառում է « մանկության հասակում, երիտասարդ Հարիջիան աղջիկների, Մահարների, Մանգասների, Դովրիսների և Չամբհարների, նվիրաբերումը աստվածուհուն և նրանց նախաձեռնությունը զբաղվել մարմնավաճառությամբ, երբ նրանք հասնում են չափահասության, շարունակում է բարգավաճել Քարնաթակայում, Անդհրա Փրադեշ և Հարավային Հնդկաստանի շատ վայրերում: Այս ամենը հասարակական հետամնացության, աղքատության և անգրագիտության արդյունք են:»

Զեկույցի մեջ նշվել է, որ մարմնավաճառության այս համակարգը ծաղկում է ֆեոդալական դասի և Բրահմանների միջև գոյություն ունեցող դավադրություն հետևանքով: Իրենց գաղափարախոսական և կրոնական ազդեցության շնորհիվ, նրանք վերահսկողության տակ են առել անկիրթ գյուղացիներին և արհեստավորներին և մարմնավաճառությունը դարձրել են կրոնով արտոնված: Զեկույցը հիմնված է Հնդկաստանի առողջապահական Կազմակերպության երկու բժիշկների

[10] Դոկ. Մ. Ա. Չաթերջի, Ով Դուք Հինդուսներ արթնացեք: Հնդկական Հայրենասերների խորհուրդ, 1993, էջ. 28

ուսումնասիրությունների վրա, ըստ որի չափահաս դառնալուց հետո, աղքատ ընտանիքների աղջիկներին վաճառքի են հանում մասնավոր աճուրդներում տիրոջ, ում վճարած սկզբանական գումարը տատանվում է 500-5000 ռուպի:[11]

Ըստ Վեդայական ուսմունքների, կինը ոչ մի իրավունք չունի: Նրանք պարզապես օրհնված են իրենց ամուսիններին ստրկամիտ լինել:

Ինչպիսին էլ լինեն տղամարդու որակավորումները,

Որին ըստ օրենքի կապված է կինը, այդպիսի

Որակավորումները, նույնիսկ նրա ենթադրած,

Նման են գետի, միացած օվկիանոսի;[12]

Մեկ այլ տարբերակի մեջ, Մանույի Վեդայական ուսմունքները ամեն դեպքում, կնոջը ոչ մի արժեք չեն տալիս:

Ոչ վաճառքով, ոչ էլ հրաժարմամբ կինը իր ամուսնուց

Չի ազատվում; այսպիսին պետք է լինի օրենքը, որ

Մենք գիտենք, որը արարածների տերը, Փրագափաթին

Պատրաստել է հնուց:[13]

---

[11] Չաթերջի, էջ. 29

[12] Բուհլերգ, էջ. 331, Գլուխ IX տարբերակ 22

[13] Բու հլերգ էջ.337, գլ ու խIX, տարբերակ 46

Ըստ Հինդու Վեդայական վավերական ուսմուքների, կինը ուղղակի ունեցվածք է, ում կարելի է ժառանգել և մեկ այլ բարեկամ կարող է գործածել:

> Մեծ եղբոր կինը, փոքր եղբոր համար է, Գուրույի կինը,,,,[14]

Նմանատիպ օրենք է իրականացնում Մանուն, կապված է ամուսնու բարեկամների կնոջը ժառանգելու հետ: Եթե կույսի ապագա ամուսինը մահանում է բանավոր համաձայնությունից հետո, նրա ամուսնու եղբայրը պետք է կնության առնի նրան…[15]

Կաստայական կոշտ և անարդար համակարգը Բրահմանիս կաստային տվեց արտոնություններ, ի հաշիվ մյուս կաստաների: Ստորի կաստաների կանայք և նրանց ժառանգները տառապում էին ամեն կերպ: Ժառանգության անարդար բաժին ստանալը, միայն մեկ խնդիր է: Ըստ Մանու օրենքի;

> Բրահմանան, որդին պետք է վերցնի չորս բաժին

[14] Բուհլերգ էջ.337 գլուխ IX, տարբերակ 57
[15] Բուհլերգ էջ. 339 գլուխ IX տարբերակ 69

Քաշաթրիայի որդին, կինը երեք, Վաայայի որդին պետք է

ունենա երկու բաժին, Սուդրայի որդին պետք է ունենա մեկը[16]

Ըստ Մանու հինդու ուսմունքների, կանայք իրավունք չունեն հարցնելու իրենց ամուսիններին կամ իրավական միջոցառումներ ձեռնարկել, ուղղելու իրենց ամուսինների վարքը:

Նա, ով անհարգալից է ամուսնուն, ով տարված է, որևէ

Չար կրքով, հարբեցող է կամ հիվանդ, պետք է մեկուսացվի

Երեք ամիս ժամանակով և զրկվի իր զարդերից և գույքից:[17]

Հինդու ուսմունքը օրինականացրել է անսահմանափակ բազմակնությունը: Ռամ հայրը ուներ մի քանի կին,ի լրում շատ հարճերի:[18] Քրիշնան,

Հինդու ուսմունքը օրինականացրել է անսահմանափակ բազմակնությունը: Ռամ հայրը ուներ մի քանի կին,ի լրում շատ հարճերի:
Քրիշնան, Մահաբհարաթի հերոսը և մարմնավորված Վիշնուն, Հինդու աստվածը, ուներ ութ հիմնական կին:

[16] Բուհլերգ, էջ. 358, Գլուխ IX տարբերակ 154: Ոչ Բրահմայական ծագում ունեցող ժառանգների ժառանգության անարդար բաժանումը շարունակվում է 154- 161 տարբերակների մեջ: Եթե սա որդիների ճակատագիրն է, ապա մենք կարող ենք պատկերցնել դուստրերի ճակատագիրը:

[17]Բուհլերգ, էջ341, Գլուխ IX, տարբերակ 78

[18] Դոկ, Բաբասահեբ Ռ. Ամբեթկար, Ռամայի և Քրիշնայի Հանելուկը, Բանգալոր, 1988 էջ. 8 Ֆազլի 1995, էջ. 107

Մահաբհարաթի հերոսը և մարմնավորված Վիշնուն, Հինդու աստվածը, ուներ ութ հիմնական կին: Նա կնության առավ տասնվեց հազար և հարյուր կին, նույն օրը:[19] Սվամի Վամդեվը, կողմնակից էր Հինդու տղամարդկանց առավելագույնը 25 կին ունենալու թույլտվությանը:[20]

Մյուս կողմից, հինդու հասարակության մեջ, կնոջ կյանքը, ում ամուսինը կնքել է մահկանացուն, դառնում է անտանելի, այն աստիճան, որ նրանք ստիպված են սուտտիի, ինքնասպանություն գործել: Գուստավ լե Բոնը, հնդկական հասարակության այս գործոնի մասին գրեց ասելով;[21]

Այրիների զոհաբերությունը ամուսնու հուղարկավորության ժամանակ նշված չէ Շաստրայի մեջ, սակայն ստացվում է, որ սովորույթը բավական սովորական է Հնդկաստանում, քանի որ մենք հղումներ ենք գտնում Հունական Պատմիչների հաշվետությունների մեջ:

Նման արհամարհանքը կանանց նկատմամբ նույնպես երևում է Հնդկական մամուլի զեկույցների մեջ,որը հաղորդում է, որ շատ երիտասարդ աղջիկների կենդանի թաղում են,քանի որ ծնողների համար նրանք տնտեսական բեռ են դիտվում:ՅՈՒՆԻՍԵՖ կազմակերպությունը պարզում է, որ մանկասպանության երևույթը լայն տարածում ունի Հնդկաստանի 60,000 գյուղերում, որտեղ բնակվում են հնդիկների 70%: Դպրոցական տարիքի աղջիկների 40 % դպրոց չեն հաճախում: Ուստի,

[19] Ամբեդկա Վիճակագրություն էջ. 25
[20] Ֆազիլե, էջ. 107
[21]Գուստավ լե Բոն, Հնդկական Քաղաքակրթությունը, էջ. 238

Հնդկաստանի անուսում բնակչության 84% մեծամասնությունը կազմում են կանայք:[22]

Թայմս թերթը զեկուցում է, որ Չինաստանի միայն մեկ երեխա քաղաքականությունը ստիպում է մերօրյա շատ չինացիների արու զավակ ցանկանալ: Ուստի, նրանք արհեստական ընդհատում են իգական սեռի երեխաների լույս աշխարհ գալը, սպանում են իրենց իգական մանկահասակ երեխաներին, կամ բջջային ստրկության են վաճառում ավելի մեծ տարիքի աղջիկներին:Այս առումով, չինական ոստիկանությունը վերջերս ձերբակալել է խմբավորման 49 անդամ, ովքեր գնում, անօրինական տեղափոխում և վաճառում էին աղջիկներին ամբողջ Չինաստանով մեկ:Իգական սեռի երեխաների նկատմամբ նմանատիպ վայրագ վերաբերմունքի արդյունքում, Պետական Ծրագրավորման Չինական Կոմիտեն զեկուցում է, որ արական սեռի քանակը 36 միլիոնով ավելի շատ է, քան իգական սեռի ներկայացուցիչներինը:[23]

1994 թվականին Օ՛ Քոնելը զեկուցում է, որ Չինական կառավարական մեկ զավակ քաղաքականության արդյուքնում, սպանում են ավելի քան մեկ միլիոն իգական սեռի երեխաների:[24]

---

[22] Ալ-Ուսրահ համար 51, Ջումադա II 1418
[23] Ընտանիքի Ներքո 15, սեպտեմբեր էջ. 7
[24] Ջեղրիկլի 1997թվ. Էջ. 20

1994 թվականին O´ Քոնելը զեկուցում է, որ Չինական կառավարական մեկ զավակ քաղաքականության արդյուքնում, սպանում են ավելի քան մեկ միլիոն իգական սեռի երեխաների

Այս հատվածում, մենք հակիրճ ներկայացրեցինք Հինդու ուսմունքի մեջ կնոջ կարգավիճակի որոշ ասպեկտների ընդհանուր տեսակետը:Բարդ կաստային համակարգը,որը մարդկանց բաժանում է որոշակի հասարակա-տնտեսական դասակարգերի անհավասար իրավունքներով,Հինդու ուսմունքի մեջ մեծ ազդեցություն է թողել կնոջ դիրքի վրա:Ես իմ ուշադրությունը շրջում եմ Հին Կտակարանի կնոջ կերպարի և կարգավիճակի վրա: Հետևյալ հատվածը ցույց կտա այն տեսանկյունը, որը կնոջը ներկայացրել է Հին Կտակարանի մեջ:

Հին Կտակարանի կնոջ կերպարը հաճելի չէ: Հին Կտակարանի շատ տարբերակներ կնոջը ներկայացնում են չար կերպարով: Մեկ հատվածի մեջ նրանց ցույց են տալիս որպես դավաճանության աղբյուր, որը հանգեցրել է մարդկության աղետներին: Եվային մեղադրում են որպես մեկի, ով համոզել է Ադամին համտեսել արգելված ծառից, ինչի արդյունքում Ադամը և նրա ժառանգները վտարվել են դրախտից: Աստծո պատվիրանների անհնազանդության մեղքը դարձավ Բնածին Մեղքի և Քրիստոսի, ՛Փրկչի՛ միջոցով քավության Քրիստոնեական դոգմայի հիմք:

Աստվածաշնչի Եվայի գայթակղիչի այս ընկալումը, Հրեա-Քրիստոնեական սովորույթի մեջ արդյունք է հանդիսացել կնոջ ծայրահեղ բացասական ազդեցության: Ըստ այդմ, բոլոր կանայք ժառանգել են իրենց մորից, Բիբլիական Եվայից և նրա մեղքը և նրա նենգությունը: Ուստի, նրանք բոլորը անվստահելի, թույլ են և բարոյապես զիջող: Դաշտանը, հղիությունը և ծննդաբերությունը արդար պատիժ են համարվում անիծված իգական սեռի հավերժ մեղքի համար: Որպեսզի գնահատենք, թե ինչ բացասական ազդեցություն է թողել Բիբլիական Եվան բոլոր իգական ժառանգների վրա, մենք պետք է դիտենք բոլոր ժամանակների որոշ ամենակարևոր հրեաների և քրիստոնյաների աշխատությունները: Եկեք սկսենք Հին Կտակարանից և դիտենք հատվածներ այսպես կոչված Իմաստության Գրականությունից, որտեղ մենք գտնում ենք.

> «Ես մահից էլ դառն եմ գտնում կնոջը, ով որոգայթ է,
>
> Ում սիրտը թակարդ է և ում ձեռքերը շղթաներ են:

Տղամարդը, ով գոհացնում է Աստուն, պետք է խուսափի

Նրանից, սակայն մեղսագործին նա կզցի որոգայթը….

Մինչ ես փնտրում և չէի գտնում, ես գտա մեկ ազնիվ

Տղամարդ հազարի մեջ, սակայն ոչ մի ազնիվ կին

Նրանց բոլորի մեջ:» (Ժողովող 7:26-28)

Հրեական գրականության մեկ այլ հատվածում, որը գտնվում է Կաթոլիկ Աստվածաշնչի մեջ, մենք ընթերցում ենք.

«Որևէ տեղից եկող չարությունը չի հասնի կնոջ

Չարությանը… Մեղքը սկսել է կնոջից, և շնորհիվ նրա

Մենք բոլորս պետք է մահանանք:» (Էկլեստիկ 25:19, 24)[25]

Ըստ Հին Կտակարանի, կանայք պատժվել են իրենց մոր,Եվայի մեղքի պատճառով,կրելով հղիության և ծննդաբերության ցավերի բեռը:

(Ծննդոց 3:16)

Կնոջը նա ասաց. Ես մեծապես կբազմապատկեմ ձեր

Վիշտը և ձեր ըմբռնումը; վշտի մեջ դուք կծննդաբերեք

[25] Դոկ, Շերիֆ, Աբդել Ազիմ, in http://www.twf.org/library/women ICJ.htm/

Զավակներին և ձեր կիրքը կլինի ձեր ամուսնուն և նա

Կիշխի ձեզ:[26]

Այսպիսի մեղադրանքը և դաժան պատիժը հակասում է Ղուրանական մարդկային գործողությունների հաշվետվությանը, անկախ իրենց արական, թե իգական սեռի: Փաստորեն, Ղուրանը երբեք չի մեղադրել միայն Եվային արգելված ծառից համտեսելը:

Ալ- Արաաֆ 22:23

Այսպիսով, նա, Սատանան, շեղեց նրանց Ադամին և Եվային խաբելով…. Եվ նրանց Տերը կանչեց նրանց ասելով. «Արդյո՞ք ես չեմ արգելել ձեզ այդ ծառը և ասել ձեզ. Իրոք, Սատանան ձեր բացահայտ թշնամին է:»

Նրանք ասացին. «մեր Տեր, Մենք սխալվել ենք:

Եթե դու մեզ չներես և չպարգևես մեզ Քո ողորմածությունը

Մենք, անշուշտ կլինենք պարտվողներից:»

Ղուրանը նշում է, որ յուրաքանչյուր անհատ անձամբ է պատասխանատու իր արարքների համար:

---

[26] Ինչ ես գտել եմ այն է, որ Աստվածաշնչի մեջ, ժառանգները վերցրել են իրենց նախնիների մեղքը: Ես միայն մեջ կբերեմ մի քանի դրվագներ
Ելք 20:5

Քանի որ Ես Տերը, ձեր Աստվածը խանդոտ Աստված եմ:
Հոր ապօրինությունը անցնում է զավակներին երրորդ
և չորրորդ սերունդ: (Վերահաստատված Ելք 34:7)

Երկրորդ Օրենք 23:2
Ստահակը չպետք է մտնի Տիրոջ հավաք, նույնիսկ իր տասներորդ սերունդը:

Ոչ մի անհատ չի վաստակում որևէ մեղք, բացառությամբ

Միայն իր դեմ և ոչ մի բեռ կրող, չի կրի մեկ ուրիշի բեռը:

Այնուհետ, ձեր տիրոջն է ձեր վերադարձը, այսպիսով

Նա ձեզ կասի, թե որտեղ եք դուք տարբերվում: Ալ-Անաամ 164

Բնածին Մեղքը ամբողջովին օտար է Իսլամական և պատասխանատու ուսմունքներին,երեք պատճառներով: Առաջինը այն հակասում է յուրաքանրյուր մարդ արարածի եզակիությանը: Երկրորդ, անարդար է մեղադրել և անեծք դնել ամբողջ մարդկության վրա, մեկ անհատի սխալի պատճառով: Երրորդ, Բնածին Մեղքի գաղափարը պատրվակ է գտնելու մեկ այլ խնդրահարույց ուսմունք, որը կապված է Քրիստոսի միջոցով քավության հետ: Ղուրանը ժխտում է մարդկային արարածների ճակատագրական

տեսանկյունը ճակատագրի նկատմամբ և կոչ է անում

մարդկանց ստանձնել իրենց վարքի և ընտրության պատասխանատվությունը:

Ալ- Իսրաա:14

Ով գնում է աջ, ապա նա գնում է աջ

Միայն հանուն իր իսկ շահի: Եվ ով գնում է

Մոլոր, ապա նա մոլորվում է իր իսկ մոլորության:

Ոչ ոք բեռնված բեռով, չի կարող կրել ուրիշի բեռը:

Եվ, Մենք երբեք չենք պատժում, մինչ չենք ուղարկում

Մարգարե, զգուշացնելու:

Ալ- Նահել :97

Նա, ով արդար աշխատում է, անկախ տղամարդ թե կին

Մինչ նա իրական հավատացյալ է Իսլամական

Միաստվածության, իրոք, նրանք Մենք կտանք

Լավ կյանք և Մենք կվճարենք նրանց, անշուշտ

Պարգև ի համեմատություն լավագույնի, ինչ նրանք

Սովորություն ունեաին անել, այսինքն Դրախտ Այսուհետ:

Քենդաթը, 1983 թվականին զեկուցում է, որ Ուղղափառ Հրեա տղամարդը իր ամենօրյա աղոթքի մեջ ասում է «Օրհնյալ լինեք Աստված Թագավոր տիեզերքի, որ Դուք ինձ որպես կին չեք արարել»: Մյուս կողմից կինը ամեն առավոտ երախտապարտ է Աստուն «Իրեն Ձեր կամքով

արարման համար»:[27] Ըստ Հրեական Թալմութի, «Կանայք ազատվում են Թորայի ուսումնասիրությունից»: Սուիդլերը, 1976 թվականին նշեց,որ Ռաբբի էլիզերը ասաց. «Եթե տղամարդը իր դստերը Թորա է սովորեցնում, կարծես նա նրան անառակություն է սովորեցնում:»[28]

Այս արգելքը պայմանավորված է անհավանական կեղծ պատմությունների վրա կապված մարգարեների դուստրերի և կանանց հետ,որը նրանք կարող են գտնել գրերի մեջ:

Հրեա Ռաբբին նշեց ինը անեծք կանանց հասցրած, որը Անկման արդյունք է.

> «Կնոջը Նա տվեց ինը անեծք և մահ. Դաշտանի արյան բեռը
>
> Կուսության արյունը, հղիության բեռը, ծննդաբերության բեռը,
>
> Զավակների դաստիարակման բեռը, նրա գլուխը ծածկված է
>
> Կարծես մեկը, ով սգում է, նա դակում է իր ականջը ինչպես
>
> Մշտական ստրուկ կամ ստրկուհի, ով ծառայում է իր տիրոջը,

[27]Թենա Քենդաթ, Ուղղափառ Երիտասարդության Հիշողությունները: Սուսաննա Հեշելի, Լինելով Հրեա Ֆեմինիստ. Նյու Յորք, Շոքեն Գրքեր, 1983, էջ. 96-7

[28] Լեոնարդ Ջ. Սուիդլեր, Կինը Հուդդայականության մեջ. Կնոջ Դիրքը Ձևավորված Հուդդայականության մեջ, Մեթուչեն Ն. Ջ Սքեյերքոր Փրեսս, 1976, էջ. 83-93

> Նրան չեն հավատում, որպես վկա և ամենից հետո – մահ»:[29]

Ի հակասություն Աստվածաշնչյան ուսմունքների, Ղուրանը չի դիտում ծննդաբերությունը և հղիությունը կնոջ պատիժ, այլ պատվելի պարտականություն, որի համար պետք է գնահատել մայրերին:

Եվ Մենք պատվիրում ենք տղամարդուն բարի և բարեխիղճ լինել իր ծնողների նկատմամբ: Նրա մայրը կրել է նրան թուլությամբ և դժվարությամբ և նրան կրծքից կտրել երկու տարեկան հասակում- երախտապարտ եղիր Ինձ և քո ծնողներին, - Ինձ մոտ է վերջնական հանգրվանը: (Լուկմաան :14)

Ղուրանը չի դիտում ծննդաբերությունը և հղիությունը կնոջ պատիժ, այլ պատվելի պարտականություն, որի համար պետք է գնահատել մայրերին

[29] Լեոնարդ Ջ. Սուիդլեր, Կինը Հուդդայականության մեջ. Կնոջ Դիրքը Ձևավորված Հուդդայականության մեջ, Մեթուչեն Ն. Ջ Սքեյերքոր Փրեսս, 1976, էջ. 115, Ափդել Ազիմու մ

Ուսումնասիրելով Հին Կտակարանի տարբերակները,կապված բռնաբարողի պատժի հետ,գրքի, որին հավատում են և հրեաները և քրիստոնյաները, զարմանալի է,թե ով է իրականում պատժվում: Արդյո՞ք տղամարդն է, ով բռնաբարել է անմեղ կնոջ, թե կինը ում բռնաբարել և ոտնահարել են: Եթե այսպես են ընկալում կնոջ արժանապատվությունը և ողջախոհությունը, ապա ի՞նչ կարող է կանխել որևէ մեկին փնտրել քաղաքի ամենագեղեցիկ կնոջը, բռնաբարել նրան, բոլորին տեղեկացնել այդ մասին և այնուհետ ըստ դատարանի, ստիպել նրան դառնալ իր կինը ամբողջ կյանքի ընթացքում: Այս մեջբերումը Երկրորդ Օրենքից է, որը վերաբերվում է տվյալ դեպքին:

Ըստ Հին Կտակարանի, դուստրերը իրենց հորից ժառանգություն են ստանում, միայն եղբայրների բացակայության դեպքում: Այրիները, մայրերը և քույրերը զրկված են ժառանգությունից

(Արքա Ջեյմսի Տարբերակ, Երկրորդ Օրենք 22:29-30)

> «29. Այնուհետ տղամարդը, ով պառկում է նրա հետ, պետք է օրիորդի հորը տա արծաթե հիսուն շեկել և նա պետք է դառնա իր կինը, որովհետև նա պղծել է նրան, նա չի կարող կնոջը թողնել իր ամբողջ կյանքի ընթացքում:

Ըստ Հին Կտակարանի, դուստրերը իրենց հորից ժառանգություն են ստանում, միայն եղբայրների

բացակայության դեպքում: Այրիները, մայրերը և քույրերը զրկված են ժառանգությունից»:

Արքա Ջեյմսի Տարբերակ, Թվեր 27:6-10

> «6. Եվ Տերը խոսեց Մովսեսի հետ ասելով.
>
> 7. Զելոֆհեհադի դուստրեր ճիշտ են ասում, դուք անկասկած պետք է ժառանգության բաժին տաք իրենց հոր եղբայրներին հավասար և դուք պետք է նրանց, իրենց հայրերի ժառանգությունը անցնելու պատճառ հանդիսանաք:
>
> 8.Եվ դուք պետք է խոսեք Իսրայելի զավակների հետ ասելով. Եթե տղամարդը մահկանացուն է կնքում և չունի որդի, ապա Դուք պետք է նրա ժառանգությունը տաք նրա դստերը:
>
> 9. Եվ, եթե նա չունի դուստր, ապա դուք պետք է տաք նրա Ժառանգությունը նրա եղբայրներին:
>
> 10. Եվ, եթե նա չունի եղբայրներ, ապա դուք պետք է տաք նրա Ժառանգությունը նրա հոր եղբայրներին»:

Ես հակիրճ վերանայեցի կնոջ վերաբերյալ Հին Կտակարանի ուսմունքները: Իմ հետազոտության ընթացքում, ես զարմանում էի, թե ինչպես է հնարավոր, այդչափ անբարոյական պատմությունները վերագրել Աստծո առաքինի դեսպաններին, մարգարեներին (Խ.Ա.Ո.Ն):

Իսլամը և Քրիստոնեությունը գրքի մեջ Ուլֆաթ Ազիզուսամադը վերագրեց Քրիստոնեության մեջ միակնության ներակայացումը և ուստի, հիացական ամուրիությունը,ընդդեմ շատ քրիստոնյա կրոնական ղեկավարների բացասական վերաբերմունքի, որոնք տեղի էին ունենում կանանց և ընդհանրապես ամուսնության նկատմամբ: Սուրբ Պողոսը, ընթացիկ Քրիստոնեության իրական հիմնադիրը, կնոջը գայթակղիչ էր համարում: Մարդկության անկման և մեղքի ծագման ամբողջ մեղադրանքը նա դնում էր կնոջ վրա: Նոր Կտակարանի մեջ մենք գտնում ենք դրվագներ, որոնք ընդգծում են այդպիսի բացասական վերաբերմունքը կանանց նկատմամբ, դրանցից են .

Արքա Ջեյմսի Տարբերակ, Թիմոթեոս 2:11-15

«11 Թող կանայք ուսուցանեն լռությամբ, ամբողջ հնազանդությամբ.

12 Սակայն, ես չեմ տանջվի կնոջը ուսուցանելու, ոչ էլ զավթել Իշխանությունը տղամարդուց, սակայն լինել լուռ:

13 Քանի որ Ադամին առաջինն էին ձևավորել, քան Եվային:

14 Եվ Ադամը չի խաբել, այլ կինը խաբվելով մեղք է գործել:

15 Առանց դիմակայելու, նա պետք է փրկվի ծննդաբերությամբ, Եթե նրանք շարունակեն հավատքով, բարեգործությամբ և Սրբության լրջախոհությամբ»:

Արևմուտքում կանանց նկատմամբ գոյություն ունեցող դարավոր արհամարհանքի պատճառը հասկանալու համար մենք պետք է վերլուծենք քրիստոնյա դասված սրբերի ծայրահեղ դիրքորոշումը, որոնք անց են կացվել կանանց նկատմամբ: Այդպիսի մի քանի ուսմունքներ թվարկված են ստորև,

«Կինը կեղծիքի դուստր է, Դժոխքի պահապան, Խաղաղության թշնամի, նրա միջոցով Ադամը Կորցրեց Դրախտը»:

(Սուրբ Ջոն Դամասին, էջ. 79)

« Կինը գործիք է, որը գործածում է Սատանան, Ձեռք բերելու մեր հոգիների տիրապետումը»:

(Սբ. Կուպրիան, էջ. 79)

« Կինը ունի իժի թույն և վիշապի չարություն»:

(Սբ, Գրիգոր Մեծ էջ. 79)[30]

Նոր Կտակարանի գերագույն նախագծող Սուրբ Պողոսը, դիմել է կնոջը ավելի ծանր լեզվով:

«Կինը պետք է ուսուցանի հանգստությամբ և

Կատարյալ հնազանդությամբ: Ես թույլ չեմ տալիս

Կնոջը ուսուցանել կամ իշխանություն ունենալ

Տղամարդու վրա, նա պետք է լուռ լինի: Քանի որ

Սկզբում արարել էին Ադամին, այնուհետ Եվային:

Եվ Ադամը չէր, որ խաբվել էր,

Կինն էր, ով խաբվել էր և դարձել մեղսագործ»:

(Թիմոթեոս Ա 2:11-14)

Սուրբ Թերթուլիանը ավելի բացահայտ էր և անկեղծ, քան Սուրբ Պողոսը, երբ նա դիմում էր իր հավատքի «լավագույն սիրելի քույրերին» ասելով.

«Արդյո՞ք դուք գիտեք, որ դուք յուրաքանչյուրդ Եվա եք:

Դատավճիռը Աստծո ձեր այս սեռի վրա, ապրում է այս

Դարում, մեղքի անհրաժեշտությունը նույնպես պետք է

30 Ուլֆաթ Ազիզ-ուս-սամադ Իսլամը և Քրիստոնեությունը, Իսլամական Հետազոտության Նախագահություն, Ռիադ, 1984 էջ. 79

Ապրի: Դուք Սատանայի դարպասն եք. Արգելված ծառի

Դրոշմ կոտրողը. Դուք Աստվածային Օրենքի առաջին

Դասալիքն եք: Դուք նա եք, ով համոզեց նրան, ում

Սատանան բավարար քաջ չէր գրոհելու: Դուք այնպես

Հեշտորեն ոչնչացրեցիք Աստծո պատկերը մարդու:

Ի շնորհիվ ձեր արժանիքի, նույնիսկ Աստծո Որդին

Ստիպված էր մահկանացու կնքել»:

Սուրբ Ավգուստինը հավատարիմ էր իր նախնիների ժառանգությանը, նա գրեց ընկերոջը.

«Ինչ տարբերություն կին է, թե մայր, այն Եվա գայթակղիչ է

Որ մենք պետք է խուսափենք ցանկացած կնոջից …. Ես չեմ

Կարող տեսնել, թե ինչ օգուտ է տալիս կինը տղամարդուն,

Եթե բացառենք ծննդաբերության գործունեությունը:»

Դարեր անց, Սուրբ Թոմաս Աքինասը դեռ համարում էր կնոջը արատավոր:

«Ինչ վերաբերում է անհատական բնույթին,

Կինը արատավոր և սխալ ծրագրավորված է,

Քանզի ակտիվ ուժը տղամարդու սերմի, հակված է

Արական սեռի կատարյալ նմանության արտադրությանը,

Մինչդեռ կնոջ արտադրությունը բխում է ակտիվ ուժի արատից

Կամ որոշ նյութական թուլությունից, կամ նույնիսկ որոշ

Արտաքին ազդեցությունից»:

Ազիմը որպես կանանց իրավունքների փորձագետ ակնարկում է հայտնի քրիստոնեական մի քանի բարեփոխումներ ասելով. «հանրահայտ բարեփոխիչ Մարտին Լյութերը չէր տեսնում որևէ օգուտ կնոջից, բացառությամբ լույս աշխարհ բերել այնքան շատ երեխա, որքան հնարավոր է, անկախ որևէ կողմնակի ազդեցության.

« Եթե նրանք հոգնեն կամ նույնիսկ մահանան,

Այն ոչ մի նշանակություն չունի: Թող նրանք

Մահանան ծննդաբերության ժամանակ,

Դրա համար են նրանք այնտեղ»:[31]

---

[31] Հայտնի բոլոր Սուրբերի մեջբերումների համար դիտեք Քարեն Արմսթրոնգին, նախկին կաթոլիկ վանամոր, Կտակարան ըստ Կնոջ, Լոնդոն, Ելմ թրի Գրքեր, 1986, էջ. 52-62 Տես նույնպես, Նենսի վան Վուրեն, Կանանց Տարանջատումը, ինչպես կիրառում են Եկեղեցիները, Ուիթչ Հանթերս և այլ շովինիստներ, Ֆիլադելֆիա, Ուեսթմիսեր Մամուլ, էջ. 28-30

Կրկին և կրկին, ի երախտագիտություն Ծննդոցի հաշվետվության, ի շնորհիվ Եվայի գայթակղիչի կերպարի, նսեմացնում են բոլոր կանանց: Ամփոփելով Հրեա Քրիստոնեական գաղափարը, Եվայի մեղսագործ բնույթի հավատքի շնորհիվ, թունավորվել են կինը և նրա ժառանգները»:

Հասկանալի է, որ շատ քրիստոնյա վանականներ գերադասում են ամուրիությունը կնոջ հետ ամուսնանալու փոխարեն: Ամուսնությանը դիտում էին որպես գործողությունը, որը չափից շատ աշխարհիկ է: Այդ շեղում է, ամբողջ ժամանակը լիովին Աստուն նվիրելուց: Մեր ժամանակներում, երկրպագության այս համակարգը ապացուցում է, որ այն լի է խնդիրներով: Այսօր շատ քիչ քանակությամբ մարդիկ են ցանկություն հայտնում ամուրիության և քահանայականության: Նվազում է երիտասարդների թիվը մենաստաններում և վանքերում:

Այսօր շատ քիչ քանակությամբ մարդիկ են ցանկություն հայտնում ամուրիության և քահանայականության: Նվազում է երիտասարդների թիվը մենաստաններում և վանքերում

Հետևելով Հրեական սովորությանը,ինչպես ներկայացնում է Հին Կտակարանը և մտաբերելով, որ Մարգարե Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) երբեք չի արգելել բազմակնությունը, վաղ հրեաները և քրիստոնյաները բազմակին էին: Այն տրվել է

որպես տարբերակ նրանց համար, ովքեր կարող են կրել ամուսնության և ընտանեկան կյանքի պատասխանատվությունը, ոչ թե նրանց, ովքեր փնտրում են սեռական հաճույք: Քրիստոնյա որոշ աղանդներ, մինչ օրս կիրառում են այս սովորույթը, օրինակ Յուտա նահանգի Մորմոնները: Հին Կտակարանի մեջ հաղորդում են, որ Սողոմոն թագավորը շատ կանայք ուներ:

Արքա Ջեյմսի Տարբերակ, Թագավորություններ Ա 11:1-8

1. Սակայն Սողոմոն Արքան սիրեց շատ Օտար կանանց, ներառելով Փարավոնի դստեր Մոաբիթների, Ամոնիթների, Էդոմիթների, Զիդոնանսների և Հիթիթների կանանց:

2. Ազգերից, Իսրայելի զավակներին Տերը ասաց. Դուք չպետք է մերձենաք նրանց, ոչ էլ նրանք պետք է մերձենան ձեզ, քանի որ իրոք, նրանք կհեռացնեն ձեր սրտերը, իրենց աստվածներից հետո.Սողոմոնը հայտնվեց այնտեղ սիրով: Այդյո՞ք հնարավոր է Ալլահի մեծ մարգարեյին, Սողոմոնին, չհնազանդվել Աստծուն այսպիսի անպատասխանատու ձևով:

3. Եվ նա ուներ յոթ հարյուր կին, արքայադուստր և Երեք հարյուր հարճ և նրա կանայք շրջեցին նրա սիրտը:

4. Քանի որ, ստացվեց, երբ Սողոմոնը ծերացավ նրա Կանայք հեռացրերցին նրա սիրտը աստվածներից և նրա սիրտը կատարյալ չէր իր Տիրոջ Աստծո հետ, ինչպես Դավիթը, նրա հայրը:

5. Քանի որ Սողոմոնը հետևեց Աշթորեթին, Զիդոնացիների աստվածուհուն և այն բանից հետո, երբ Միլքոմը ատելի էր Ամոնացիներին:

6. Եվ Սողոմոնը չարիք գործեց Աստծո առջև և լիարժեք չհետևեց Տիրոջը, ինչպես վարվեց Դավիթը, իր հայրը:

Այսպիսով, ինչու՞ է ի հակասություն սուրբ գրքերի, ժամանակակից Քրիստոնեությունը ժխտում բազմակնությունը:

7. Այնուհետ Սողոմոնը կառուցեց բարձր վայր Չեմթշում, Ի նողկանք Մոաբի, բլուրի վրա, որը Երուսաղեմի դիմաց էր և Մողաքի համար, ի նողկանք Ամմոնի զավակների:

8. և նմանատիպ նա վարվեց իր բոլոր օտարազգի կանանց հետ, ովքեր խունկ են այրել և զոհաբերել են իրենց աստվածներին:[32]

Մարգարե Աբրահամը ուներ երկու կին, Սառան և Հաջարը: Մի առիթով Լյութերը մտացածին համբերատարությամբ խոսեց բազմակնության մասին և հայտնի է, որ Ֆիլիպ Հենսսենը խրախուսել էր բազմակնության դիրքորոշումը:

[32] Մարգարե Սողոմոնի մասին տեղեկություններից շատերը, Հին Կտակարանի այս հատվածի մեջ, ըստ Իսլամի ուսմունքների կեղծիք են: Ալլահի մարգարեն երբեք չէր վերադառնա կռապաշտության: Հրեաները Սողոմոնին չեն համարում Աստծո մեծ մարգարե, այլ արքա:

[33]Այսպիսով, ինչու՞ է ի հակասություն սուրբ գրքերի, ժամանակակից Քրիստոնեությունը ժխտում բազմակնությունը: Քրիստոնյա կրոնական ղեկավարները, ովքեր պնդել են որոշակի մարգարեական իշխանություն և բնութագիր, ներառելով անգամ հայտնությունը, Աստծո հետ բանավոր ուղղակի կապը, միջամտել են փոխել ընտանեկան հարաբերությունների օրենքները, ի շահ տղամարդկանց,ովքեր չեն ցանկանում կրել ամուսնության պարտականությունները:

Բազմակնությանը վերաբերող Քրիստոնեության բացասական վերաբերմունքի մեկ այլ պատճառը, Քրիստոնեության և հունա-Հռոմեական ավելի զարգացած փիլիսոփայական մշակույթի պատմական կապն է: Քրիստոնեության վրա ազդեցություն է գործել միակնության արտառոց և տարօրինակ հասկացությունները: Բնակչության մեծամասնությանը համարում էին ստրուկներ, ում կարող էին անվճար գործածել: Այսպիսով, կարիք չկար որևէ տեսակի բազմակնության, որը կարող էր սահմանափակել տղամարդու այսպիսի ազատությունը և հասարակության մեջ կանանց պարտադրել պարտադրել որոշակի իրավունքներ: Շատ հույն փիլիսոփաներ շահը և երջանկությունը դիտում էին որպես բարոյականության միակ չափանիշ: Նրանք դաժան պատերազմ էին մղում էթիկայի և արժեքների դեմ, որոնք խոչընդոտ էին հանդիսանում կյանքի լիարժեք բավարարվածության և հաճույքի ճանապարհին: Տղամրդուն պետք է թույլ տալ փնտրել այնքան հաճույք, որքան նա է ցանկանում: Ուստի

[33]Ջ .Ջոնս և Բ: Ֆիլիպս 1985, էջ. 3

նրանք չընկալեցին քրիստոնեական ավանդույթային ողջախոհության ոչ մի արժեք:

Հիշեք, բազմակնության տարբեր ծայրահեղ մոտեցումների բացասական ազդեցությունը Հռոմեա-Քրիստոնեական հասարակության մեջ, Հռոմեական բռհեմիկ սեռական հարաբերությունը և ամուսնությունից խուսափելը և կանանց նկատմամբ քրիստոնյա հոգևորականների բացասական վերաբերմունքը, ժամանակակից հասարակական աղետի արդյունք հանդիսացան: Այս հասարակական ախտերը ներառում են միայնակ մայրերի ահազանգող մակարդակը, սեռական ոտնձգությունները, անչափահասների ծննդաբերությունները, արտամուսնական երեխաները և այլն: Իսլամը կյանքի միակ համընդհանուր ուղղին է, որը ապահովում է գործնական, համընդհանուր, կենսունակ, բնական համակարգ և աշխարհի ներկայիս հիմնախնդիրների լուծում:

Իսլամը կյանքի միակ համընդհանուր ուղղին է, որը ապահովում է գործնական, համընդհանուր, կենսունակ, բնական համակարգ և աշխարհի ներկայիս հիմնախնդիրների լուծում

Թեև, Աստվածաշնչի ուսմունքների մեջ տարածված էր,որ կանայք, երեխաները և ծերերը պատերազմի մասնակցություն չունեն,նրանց ապրելու իրավունքը պաշտպանված չէր:

Իսրայելացիների թշնամիների կանանց երեխաների սպանդը սովորական երևույթ էր: Աստվածաշնչյան շատ տարբերակներ նկարագրում են այդ,

Արքա Ջեյմսի Տարբերակ Թվեր 31:15-24

17. Այժմ, ուստի սպանեք յուրաքանչյուր տղամարդ, Այդ թվում և փոքր և սպանեք յուրաքանչյուր կնոջ, Ով տղամարդ է տեսել, կենակցելով նրա հետ:

18. Սակայն բոլոր կանանց և երեխաներին, ովքեր Չեն ճանաչում տղամարդ կենակցելով նրան, Կենդանի թողեք ձեզ համար:

Արքա Ջեյմսի Տարբերակ Ղուկաս 19:26-27

27. Սակայն այն իմ թշնամիները, Որոնց ես չեմ կարող իշխել Բերեք այստեղ և սպանեք նրանց Իմ առջև:

Արքա Ջեյամս Տարբերակ Եզեքիել 9:4-7

4. Եվ Տերը ասաց նրան, գնա քաղաքի միջով, Երուսաղեմի միջով և նշան արա այն տղամարդկանց ճակատներին, ովքեր հոգոց հանեցին և աղաղակեցին Ամբողջ գարշանքների համար, որոնք Կարող են կատարվել դրա միջով:

5. Եվ, մյուսներին նա ասել է, իմ լսածի.Գնացեք դուք նրա ետևից, քաղաքի միջովև վնասեք, թող ձեր աչքերը չխնայեն, ոչ էլ թող դուք խղճաք .

6. Սպանեք բացարձակապես ծեր և երիտասարդն կույսերի և փոքրիկ երեխաների և կանանց, սակայն մի մոտեցեք որևէ տղամարդու, ով նշան ունի և

սկսեք իմ սրբարանից: Այնուհետնրանք սկսեցին մի ծեր մարդուց, ով տան առջևում էր:

Արքա Ջեյմսի Տարբերակ 15:1-3

3. Այժմ գնացեք և սպանեք Ամաղեկներինև բացարձակապես ոչնչացրեք ամենը, ինչ նրանք ունեն և մի խնայեք նրանց,սակայն սպանեք և տղամարդկանց և կանանց, նորածիններին և ծծկերներին, ցուլ և ոչխար, ուղտ և ավանակ:

Արքա Ջեյմսի տարբերակ Եսայի 13:15-16

15.Յուրաքանչյուրին, ում գտնում են Պետք է սրահարեն և յուրաքանչյուրին Ով մերձեցել է նրանց, պետք է ընկնի սրից:

16. Նրանց երեխաներին նույնպես պետք է Ջախջախեն կտորների իրենց աչքերի առջև Իրենց տները պետք է փչացնել և իրենց կանանց բռնաբարեն:

Արքա Ջեյմսի Տարբերակ Օսեե 13:16

16. Սամարիան պետք է ամայի դառնա, Քանի որ նա ըմբոստացել է իր Աստծո դեմ, Նրանք պետք է ընկնեն սրից, նրանց նորածիններին Պետք է ջարդել կտորների և նրանց հղի կանանց Պետք է պատռել:

Միգուցե, նման տարբերակները օրինական հնարավորություն են տվել Սերբերին և Միոնիստներին անխտիր սպանել կանանց և երեխաներին: Նույնիսկ նորածինների սպանդի Նման տարբերակների գոյությունը, այն է, ինչ խոչընդոտ է հանդիսացել Պապին, հրաժարվել վայրագություններից, որոնք կատարվել են Բոսնիայի և

Կոսովոյի մահմեդական կանանց և երեխաների նկատմամբ:

Անկասկած, նմանատիպ բնօրինակ Հրեա-Քրիստոնեական ուսմունքները, որոնք քարոզել են մարգարեներ Մովսեսը և Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն), նողկանք են ապրել այսպիսի սովորույթներից և դրանք համարել են անբարոյական արարքներ, սակայն, դժբախտաբար, բարոյական նմանատիպ սկզբունքները և ողջախոհությունը չեն իրականացնում նույնիսկ մարդիկ, ովքեր պնդում են, որ ուսմուքը Աստծո խոսքն է:Շատերին նախազգուշացրել են անձնական ազատության ներքո, անբարոյական սովորույթների ծայրահեղության դեմ: Այն ժամանակ, երբ մենք լսում ենք համասեռամոլ քահանաների և բաց ամուսնությունների մասին, ամեն ինչ դառնում է սպասելի, քանի որ կուսությունը և ողջախոհությունը դիտվում են որպես հնաոճ և հետամնացության բնութագիր: Ես հիշում եմ Էդվին Քուքի,նախկին ամերիկացի վիրաբույժ,գեներալի, պատասխանը ռադիոյում տրված հարցին, թե որն է լավագույն ճանապարհը կանգնեցնելու ՁԻԱՀ-ի և այլ սեռավարակների տարածումը ;

«ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»: Այն ժամանակ, երբ ֆեմինստները շարունակում են պահանջել տղամարդու և կնոջ կատարյալ հավասարությունը,նրանք հանդիպում են շատ կանանց զգալի ընդդիմության, ովքեր համամիտ չեն «ավանդական սեռային տարբերության էական փոփոխությունների հետ: Ֆիլիս Շլեֆլին, օրինակ, Հավասար Իրավունքների Սահմանման ինչեղ հակառակորդ է և հավատում է, որ որպես հետևանք կանայք, փաստորեն, կարող են կորցնել որոշակի կարևոր իրավունքներ: Նա նույնպես զգում է, որ կանայք գտնում են իրենց մեծագույն կատարելությունը տանը, ընտանիքի հետ»:[34]

Կարիք չկա ասելու, որ եկեղեցիները և իրենց կրոնական հիերարխիան կոռուպացվել են և ավելի մտահոգված են ունեցվածքով

[34] Թ. Սուլիվան, Ք. Թոմսոն, Ռ. Ռայթ, Ջ. Գրոս և Դ. Սփադի, Հասարակական խնդիրներ. Տարամետ Հեռանկարներ. Ջոն Ուիլի և Որդիներ, Նյու Յորք 1980, էջ. 456-7

և համբավով, քան բարոյականությամբ: Նրանք ավելի մտահոգված են քանակական ավետարանչականության ներդրման միջոցով աղքատների թշվառությամբ և հիվանդների հոգեվարքով: Փոխարենը, նրանք պետք է իրենց ուղերձը կենտրոնացնեն անբարոյականության դեմ և վերստին ներկայացնեն ողջախոհությունը և էթիկան: Նախագահ Քլինթոնի կոչը ներել այն բանից հետո, երբ նա ժխտել է Սպիտակ Տան աշխատակցուհի Մոնիկա Լեվինսկու հետ իր հարաբերությունները, շատ նման է Ջիմմի Սվագարթի կոկորդիլոսի արցունքներին, ավելի շատ մարդ խաբելու և ավելի շատ փող կորզելու համար:

Դայան Սոյերը ABC հեռուստատեսության իր Հիմնական Ժամանակ հաղորդման մի քանի մասերում ցույց է տվել, որ այս հեռուստաավետարանչականների մեծամասնության նպատակն է սոսկ կուտակել զանգվածային հարստություն

ի հաշիվ հավատացյալների խաբեության: Այս խիստ վտանգավոր համակարգերը հոսում են աշխարհի ավելի շատ վայրեր, արտահանվելով մարդու իրավունքների և ազատության անվան ներքո:

Արդյո՞ք կարող էր Աստվածը, Ողորմածը, Կարեկցողը և ամեն ինչ Ներողը այսպիսի տարբերակներ ասել և տալ այսպիսի արատավոր հրամաններ ինչպես ընթացիկ Աստվածաշունչը վերագրում է Աստծուն և Աստծո Մարգարեներին: Անկասկած, ոչ: Եթե Նա նույն աստվածը չէ, որը ուղղորդել է Մուհամմեդին Խ.Ա.Ո.Ն չսպանել երեխա, կին կամ ծեր, այլ միայն նրանց, ովքեր մարտնչում են կռվի դաշտում և հանդիսանում են հարձակման պատճառ են: Ես չէի կարող լինել անարդար ասելով,որ կանանց դեմ այսպիսի անհավատալի տեսակետները Հինդուիզմի, Հուդայականության և Քրիստոնեության մեջ, կանգնած են այն շատ տառապանքների ետևում, որոնց առճակատում են կանանյք պատմության ընթացքում,որը առաջնորդում է այսօրվա անբարոյականության, ազատության, ֆեմինիզմի և աշխարհիկ ծայրահեղությունների:

Մարիամ Ջամիիլահին զեկուցեց, որ կանանց ՛ազատագրման՛ շարժման առաջին հաղթողները քաջատեղյակ արևմտյան մտածողներ Մարքսը և էնգելսն էին:Անկասկած նրանք հանդիսանում են կոմունիզմի հիմնադիրները, որը ապացուցվել է որպես կյանքի ավերիչ համակարգ: Նրանց 1948 թվականի կոմունիստական Մանիֆեստը, քարոզում է, որ ամուսնությունը, տունը, և ընտանիքը ոչ այլ ինչ է, քան անեծք, որը կանանց պահում է անժամկետ ստրկության մեջ: Ուստի նրանք պնդում են, որ կանանց պետք է ազատագրել ընտանեկան ստրկությունից և տալ լիարժեք տնտեսական անկախություն, արդյունաբերության մեջ լիադրույք աշխատանքի միջոցով:

Կանանց ազատագրման այդ հերոսների և ֆեմինիզմի այլ անդրդվելի աջակիցների նպատակն է այնքան ազատություն պարգևել կնոջը, որ նա որպես տղամարդ անձնատուր լինել ապօրինի սեռական հարաբերության,խառը կրթության, տանից դուրս աշխատանքի մեջ տղամարդու կողքին, հասարակական ֆունկցիաների և մինչ ամուսնությունը կիսամերկ նորաձևությամբ սիրատածմանը, խառը հասարակական գործառույթների, որոնք ներառում են խմիչքը, թմրանյութը և պարերը:[35] Այս ներառում է հակաբեղմնավորիչների, ամլացման և հղիության արհեստական ընդհատման տարածման, որպեսզի կանխեն անցանկալի հղիությունը ի հաշիվ կանանց, ովքեր կրում են ազատագրման բեռը: Ընտանիքները կործանվում են:Երեխաներին արհամարհում և չարաշահում են:

Նրանց 1948 թվականի կոմունիստական Մանիֆեստը, քարոզում է, որ ամուսնությունը , տունը, և ընտանիքը ոչ այլ ինչ է, քան անեծք, որը կանանց պահում է անժամկետ ստրկության մեջ

[35] Մարիամ Ջամիիլահ, Իսլամը Տեսականում և Գործնականում. Հ. Ֆարուք Գործ. Լահոր 1983, էջ. 94-5

Բարոյականությունը դառնում է հին, անցանկալի ապրանք:

Շատ մտահոգված մտավորականներ բացահայտ արտահայտել են անսահմանափակ անձնական ազատության իրենց մտավախությունը, որի արդյունքում մեծ վնաս է հասցվել հասարակությանը, որպես ամբողջություն և միգուցե մարդկությանը ընդհանուր առմամբ: Այս մտավորականներից է Մաքս Լերները, հայտնի ամերիկացի պատմաբան և սյունակագիրը: 1968 թվականի ապրիլի սկզբին, Ընթերցողի Ժողովածու հոդվածի մեջ, նա իր խորը մտահոգությունը արտահայտեց կապված ողբերգական բացասական փոփոխությունների հետ, որոնք տեղի են ունեցել ազատագրման անվան տակ, ասելով.

> Մենք ապրում ենք Բաբելոնյան հասարակության մեջ, …. Շեշտը դրվում է զգայությունների և սեքսուալության Ազատության վրա: Բոլոր հին կոդերը կոտրվել են: Մինչ վերջերս, եկեղեցին, կառավարությունը, ընտանիքը և համայնքը թելադրում են, թե ինչը կարելի կամ չի կարելի արտահայտել հասարակության մեջ: Ամեն դեպքում, այժմ, այս հաստատությունները Նվաձել են զանգվածային հասարակության պահանջները, Որոնք պահանջում են տեսնել և լսել ամենը: Ամբողջ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, հանդիսատեսը Փաթեթավորել է արվեստի տներ և շրջակա կինոթատրոններ Դիտելու բազմակի օրգազմներ, հազվադեպ հագած Երիտասարդ շվեդ դերասանուհու, Կնոջ: Իտալացի ռեժիսոր Միքելանջելո Անտոնիոնին կոտրեց արգելքը ընդդեմ

Առաջխաղացման, կատարյալ մերկությունը պայթեցնելով: Բարբարելլայի մեջ, ֆիլմը կառուցված է ֆրանսիացի Կատակերգու հերոսուհու անվերջանալի հրապուրանքներով, Ջեյն Ֆոնդան ցատկում է մեկ մերկ տեսարանից մեկ այլը, Տոնելով էրոտիկ կյանքը: Ջեյսոնի պատկերը, մի ուշագրավ Ուղևորություն է մոլորված հոգու, սև, տղամարդ Մարմնավաճառի, սեղմում է ավելի քան երկու ժամում Բոլոր անփորձ լեզուները և կյանքի անկեղծ անկյունները, Որ այսօր գտնում ենք ազատ արտահայտություններ համարյա Յուրաքանչյուր անկախ ամերիկյան ֆիլմի մեջ: Ճիզվիտ աստվածաբան Հայր Վալտեր Ջ. Օնգը ասաց. «Մենք պատրաստվում ենք ապրել ազատության աստիճանում, Ավելի մեծ, քան մինչ այդ անցյալում մենք տեղյակ էինք….»[36]

Գրքի այս հատվածում, ես ուղղակի կամփոփեմ որոշ հետևանքներ, որոնք պատճառում է ընտանիքին, հասարակությանը և ամբողջ աշխարհին մերօրյա անսահմանափակ լիբերալիզմը:

1. ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

Շատ արևմտյան և արևմտայնացված հասարակությունների մեջ դավաճանությունը և արտամուսնական սեռական հարաբերությունները դառնում են անհատական անձնական ազատության մաս: Մեօրյա ամուսնությունների մեջ դավաճանությունը դարձել է կատարյալ: Նմանատիպ արտամուսնական

[36] Մաքս Լերներ, Մեր Գնացող Հասարակությունը, Որտեղ է Այն Գնում. Ընթերցողի Ժողովածու, 1968 թվական ապրիլ.

սովորույթները ընդհանուր առմամբ մեծ խնդիրներ են պատճառում հասարակությանը: Աճում է հղիության արհեստական ընդհատման տոկոսը, ծնվում են շատ արտամուսնական երեխաներ: Սոցիալական և հոգեբանական վնասվածքները խստորեն ազդում են ընտանիքի վրա, որպես դրախտ անդամների համար: արևմտյան համայնքների մեծամասնությունում նման արտամուսնական սովորույթի մեկ գործոնը կապված է տղամարդկանց և կանանց անհավասարակշիռ քանակի մեջ:

Ըստ Ազգային Կարծիք Հետազոտական Կենտրոնի, 1995 թվականին, ամերիկացի ամուսնացած տղամարդկանց 25% վերջին տասներկու ամիսների ընթացքում,բացի իրենց կանանցից, մեկից վեց սեռական զուգընկեր ունեն: Նույն ժամանակահատվածում, ամերիկացի ամուսնացած կանանց մոտ 15% մեկից վեց զուգընկեր ունեն բացի իրենց ամուսիններից: Իրենց կյանքի ընթացքում, ամերիկացի տղամարդիկ սովորաբար ունենում են առավելագույնը վեց սեռական զուգընկեր:[37]

Քլինթոն-Լեվինսկի դրաման պատահել սովորական մարդկանց մոտ, սակայն այն անսպասելի է մոլորակի ամենահզոր ազգի գլխավոր հրամանատարից: Այն ներառում էր շատ վիրավորական սեռական գործողություններ և այն քննարկման էր դրվում ամենանողկալի ձևով, այնպես, որ ծնողները ստիպված էին իրենց երեխաներին հեռու պահել հեռուստաէկրաններից կամ այսպիսի անբարոյական հարաբերությունների սարսափելի մանրամասները լսելուց: Ինչու՞ է այս տեղի

[37] Հաղորդվում է Մաքմիլան Տեսական Օրացույցի մեջ, 1996թվ. էջ. 104

ունենում մի հասարակության մեջ, որը ընտանեկան էթիկայի և բարոյականության կարիք ունի և որտեղ ՁԻԱՀ ճակատագրական հիվանդությունը լուրջ սպառնալիք է:

Պատասխանը շատ պարզ է: Այս անբարոյական սովորույթները կարող են տեղի ունենալ ցանկացած հասարակության մեջ, որը կորցրել է իր աստվածային ոգեշնչված արժեքները և բարոյականությունը, ինչը կառավարում է տղամարդու և կնոջ փխրուն հարաբերությունը: Դավաճանությունը և այլ անողջամիտ սովորույթները հասարակությունների նորմա են դառնում, որը ընկալում է բարոյականությունը, կուսությունը և ողջախոհությունը արմատական, հետամնաց և անբնական: Առողջական Վիճակագրության Ազգային Կենտրոնը, ի պատասխան Ազգային Ուսումնասիրության Ընտանիքի Աճի 1995 թվականի Հունվար Հոկտեմբեր ամիսների, հարցազրույցներ իրականացրեց 60,

Առողջական Վիճակագրության Ազգային Կենտրոնը, ի պատասխան Ազգային Ուսումնասիրության Ընտանիքի Աճի 1995 թվականի Հունվար Հոկտեմբեր ամիսների, հարցազրույցներ իրականացրեց 60, 201 կանանց հետ: Հարցված կանանց միայն 10,5 % բացի ամուսիններից զուգընկեր չեն ունեցել: Մնացած 89,5% զեկուցեցին, որ ունեն արտամուսնական հարաբերություններ

201 կանանց հետ: Հարցված կանանց միայն 10,5 % բացի ամուսիններից զուգընկեր չեն ունեցել: Մնացած 89,5% զեկուցեցին, որ ունեն արտամուսնական հարաբերություններ:[38]

2. ԴԵՌԱՀԱՍ ԾՆՈՒՆԴՆԵՐ

Քանի դեռ «Դոկ. Ռութ Ուղիղ» և այլ համապատասխան ծրագրերը եթեր են արձակվում ուսուցանելու բաց սեռական հարաբերություններ, հետևյալ սարսափելի վիճակագրությունը սպասելի է: 1990 թվականին, դեռահասների ծննդաբերության մոտ 67% ընկնում էր չամուսնացած մայրերին, որը նաև ներառում էր հղիության արհեստական ընդհատումները: Ավելի կործանիչ էր, այն, որ դեռահաս ծննդաբերությունների մեծամասնության ընթացքում, մայրերին թողնում են միայնակ կրել ֆինանսական և հոգեբանական պատասխանատվությունը, դաստիարակելու նորածիններին: Արական սեռի ներկայացուցիչը պարզապես լքում է նրանց երկուսին և միգուցե, մեկ այլ հեշտ որս է փնտրում:1995 թվականին, Մաքմիլան Դիտողական Օրացույցը զեկուցում է, որ ամերիկացի տղաների 70% սեռական հարաբերություն են ունենում մինչ 18 տարեկանը, մինչդեռ այդ տարիքիք աղջիկների 56 % -ն է կորցնում իրենց կուսությունը:

---

[38] Ամերիկյան Միացյալ Նահանգների Ամփոփումը, 1998թվ. 118 հրատարակություն, հոկտեմբերի թողարկում:

Այդպիսի հասարակության մեջ տղամարդիկ և կանայք ազատորեն խառնվում են միմյանց առանց ողջամիտ սահմանափակումների, որտեղ տղամարդու և կնոջ նմանատիպ հարաբերությունները տարածված է: Տղամարդը և կինը կարող են իրենց միայնակ կողպել տներում, աշխատավայրերում և այլ մասնավոր տեղանքներում, ինչպես Նախագահ Քլինթոնը վարվեց Մոնիակայի հետ ձվաձև գրասենյակում, այն արդարացումամբ, որ նրանք ներգրավված են լուրջ աշխատանքի մեջ հանուն,ազգի բարօրության: Արևմտյան և նմանատիպ հասարակությունները երկար ժամանակ կուրորեն քանդում են բարոյական սկզբունքները, տեղավորելու կեղծ արժեքները և սկզբունքները,

արդիականացման և լիբերալացման խաբուսիկ տեսիլքով, որը կանանց և տղամարդկանց հրում է դավաճանության և փարիսության մութ բովանցքները:

3. ՍԵՌԱԿԱՆ ՃՆՇՈՒՄՆԵՐ

Հավասար Զբաղվածության Հնարավորության Հանձնաժողովը նշում է, որ կին աշխատակցուհիների սեռական ճնշման զեկուցած բողքների քանակը 1992 թվականին 10,578 դեպք է: 1993 թվականին քանակը աճեց 12,537 դեպքի:[39] Խնդիրը միայն ԱՄՆ-ին չի վերաբերովում, այլ ավելի համընդհանուր է,մասնավորապես այն հասարակությունների մեջ, որոնք որևէ տղամարդկանց և կանանց հարաբերությունների մեջ որևէ սահմանափակում չեն դնում: Ըստ Միջազգային Զբաղվածության Կազմակերպության վերջին, 1992 թվականի նոյեմբերի զեկույցի,որի վերնագիրն է ՛Պայքար Աշխատավայրերում Սեռական Ճնշումների՛, արդյունաբերական աշխարհի աշխատավայրերում, տարեկան հազարավոր կանայք են դառնում սեռական ճնշումների զոհեր: Հարցմանը մասնակից կանանց 15-30 տոկոսը ասում են, որ նրանք հաճախակի, կոպիտ սեռական ճնշման առարկա են: Ամերիկայի Միացյալ Նահանգների հարցմանը մասնակցող կանանցից 42% զեկուցեց սեռական ճնշման որևէ տեսակ: Զեկույցի մեջ ներառում էին այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ավստարլիան, Ավստրիան, Դանիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ճապոնիան և Միացյալ Թագավորությունը: Աշխատանքի Հետազոտման Վարչությունը 1987 թվականին կազմեց հետազոտություն, որտեղ հարցմանը մասնակցող կանանց 75 % զեկուցեցին, որ նրանք իրենց աշխատավայրերում ենթարկվել են որևէ

[39] Մաքմիլան Տեսական օրացույց 1996թվ. էջ. 37

կարգի սեռական ճնշման։[40] Ըստ Առողջապահության և Սեռային Հավասարության Կենտրոնի Բնակչության Զեկույցների, 1997 թվականին Ավստրալիայի կանանց 25% սեռական ճնշում են զեկուցել։ Նույն տոկոսադրույքը 1996 թվականին զեկուցել են Շվեցարիայում։ Կոստա Ռիկայում հարցմանը մասնակցող կանանց 32% -ն է հաղորդել սեռական ճնշման որևէ տեսակ, մինչդեռ Մալազիայում միայն 8% է ենթարկվել սեռական ճնշման։

Ընդդեմ կանանց հաղորդված սեռական ոտնձգություններ տարբեր երկրներում		
Երկիր	Տոկոս %	Տարի
Միացյալ Նահանգներ	42	1992
Ավստրալիա	25	1997
Շվեցարիա	25	1996
Կոստա Ռիկա	32	1996
Մալազիա	8	1996

4. ՄԵԿ- ԾՆՈՂ ԸՆՏԱՆԻՔԸ

Միայնակ ծնողը լինելը մարդկային հասարակական հարաբերությունների պատմության մեջ սովորական երևույթ չէ։ Այս տեսակի ընտանեկան հարաբերությունները զարգացում են ապրել վերջին դարի մի քանի տարիների ընթացքում։ Ամուսնալուծությունների և արտամուսնական

[40] 1994 թվկանի Տեղեկատվական Օրացույց, Ինֆոսոֆթ Ընկ.

երեխաների աճող տեմպերը միայնակ ծնողի երևան գալու մեծագույն գործոններն են: Բարոյականության քայքայումը արևմտյան և նմանատիպ հասարակությունների մեջ, ի շնորհիվ արտամուսնական երեխաների ծնունդների մտահոգիչ տեմպերի, հասել է ծնունդների 50 %, այնպիսի երկրում ինչպիսին Շվեդիան է: Նմանատիպ ընտանիքի ավելի ճիշտ սահմանը պետք է լինի մոր գլխավորած ընտանիքները: Մայրերը գլխավորում են այդ մեկ ծնող ընտանիքների ավելի քան 90 %:

Ամուսնալուծություններ և արտամուսնական երեխաների աճող տեմպերը միայնակ ծնողի երևան գալու մեծագույն գործոններն են

Ամբողջ Եվրոպայում Միացյալ Թագավորությունը միայնակ ծնողի ընտանիքների քանակությամբ բարձր դիրք է գրավում: 1991 թվականի Սեպտեմբերի 27-ին Թայմսը թողարկման մեջ, զեկուցում է, որ միայնակ ծնողների ընտանիքների տոկոսը կրկնապատկվել է 90-ականներին, 16,7%, ի համեմատություն 8,3% յոթանասունականների վաղ շրջանի:Կանայք արարում են այդ ընտանիքների 90%: Նմանատիպ իրավիճակներ են նաև զեկուցվել Ավստրալիայում:[41] Ջեն Լեվիսը, 1992 թվականին, մեղադրել է միակողմանի ծնողների ընտանիքների աճող քանակը

[41] Պրոֆ. Շաթիա Ս. Ջերրիկլի. Մահմեդական կանայք և Ժամանակակից Մարտահրավերները. Մաջդալավի Մամուլ, Ամման 1997. Էջ. 95

երեք զարգացող հասարակական փոփոխություններով. 1. Տանից դուրս աշխատող կանանց արագ աճով 2. 70 –80 ականների ամուսնալուծությունների աճող չափանիշով 3. Ապօրինի երեխաների ծնունդների դրմատիկ աճով [42]

5. ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՆՑ և ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Աճ է ապրել կանանց և երեխաների ընտանեկան բռնությունը: Չնայած նման խնդիրը չի սահմանափակվում արևմտյան հասարակությամբ, այն դարձել է կյանքի նորմա:Օրինակ ԱՄՆ-ում, ավելի քան երկու միլիոն կին ամուսինների կամ զուգընկերների բռնության բողոք են ներկայացրել ոստիկանություն: Աբուրդենը և Նայսբիթը, 1993 թվականին նաև նշել են, որ ԱՄՆ-ում օրական կտրվածքով չորս կին ենթարկվում են ծեծի մինչ մահանալը:[43] Հինգ կանանցից մեկը, ովքեր զոհ են իրենց ամուսիններին կամ նախկին զուգընկերներին, զեկուցում են, որ նրանք նույն անձի զոհ են դառնում կրկին և կրկին:[44]

Ազգային Հանցագործությունների ամփոփումը հետևյալ զեկույցը ամփոփում է ԱՄՆ-ում կանանց բռնության չափի ծավալը:

> Կանանց բռնության ուսումնասիրությունը Ցույց է տալիս, որ այդ հարձակումների երկու- երրորդը Գործում է զոհին հայտնի անձը, որպիսիք են ամուսինը, Ընկերը, կամ ընտանիքի այլ անդամը կամ ծանոթը, ավելի բարձր ցուցանիշ, քան տղամարդկանց դեպքում:

---

[42] Ջեդրիքլի էջ. 95
[43] Ջեդրիքլի էջ.97
[44] Ծեծի բուժման Հիմունքները, Ընդհանուր Նպատակ, Ցամայկա Փլեյն

Հարցումը, որը վարում է Արդարադատության Վարչության Բյուրոյի, Արդարադատության վիճակագրությունը գտան, որ ազգի մոտավորապես 107 միլիոն կանանցից 2,5 միլիոնը 12 տարեկան կամ ավելի բարձր տարիքում ենթարկվում են բռնաբարության, կողոպուտի կամ հարձակման բնորոշ տարում, կամ զոհ են սպառնալիքի կամ հանցագործության փորձի իրականացման: Օրինազանցների 28 տոկոսը մերձավորներ են, օրինակ ամուսիններ կամ զուգընկերներ և մյուս 39 տոկոսը ծանոթներ կամ բարեկամներ….. Արդյունքները կազմված են ավելի քան 400,000 հարցազրույցներից, որոնք անց են կացվել 1987 - 1991 թվականների միջև:

Զեկույցը նշում է, որ սկսած 1973 թվականից,երբ Արդարադատության Վիճակագրության Բյուրոն սկսել է իր տարեկան հարցումները, տղամարդկանց դեմ տեղի ունեցող հանցագործությունները աճել են, կանանց նկատմամբ գործակիցը մնայուն է մնացել….

Չնայած սևամորթ կանայք ավելի քան երկու անգամ շատ են Կողոպուտի զոհ դառնում քան սպիտակամորթ կանայք, Ոչ մի էակ ան ռասսայական տարբերություններ գոյություն չուներ իգական սեռի բռնաբարության կամ հարձակման զոհերի մեկ շնչի տեմպերի շրջանում:[45]

[45]Ազգայ ին հանցագործու թյ ու նների Զոհերի Հարցման Զեկու յ ցի մեկ օրինակներ,«Կանանց դեմ Բռնու թյ ու նը» (NCJ-145325)

Սենատոր Ջոզեֆ Բիդենը զեկուցեց, որ անօթևան կանանց և երեխաների 50 տոկոսը հայտնվում են փողոցում տնային բռնության հետևանքով:[46] Բեննեթը և Լա Վիոլեթը, 1993 թվականին գնահատեցին մոտ չորս միլիոն կանանց զեկույցը, ովքեր տարեկան ապրել են որոշակի տեսակի ֆիզիկական հարձակում: Այս տեղի է ունենում այն ժամանակ, որտեղ միայն կես միլիոն վթար է տեղի ունենում: Բռնության յոթանասուն հինգ տոկոսը տեղի է ունենում այն պատճառով, որ կինը ամուսնալուծություն է խնդրում :[47]

Ըստ 1991 թվականի Հնդկաստանի կանանց Մակի զեկույցի, հասարակական սովորույթը, որ հարսնացուի ընտանիքը պետք է օժիտ վճարի փեսացուին ապացուցել է, որ ամուսնության ներդաշնակության դեմ է գործում: Շատ տղամարդիկ

[46] Սենատոր Ջոզեֆ Բիդեն, Ամն-ի Սենատի Հանձնաժողով Կանանց նկատմամբ Դատական Բռնության: Համակարգի զոհերը, 1991 թվական
[47] Ջեղրիքլի, էջ. 97

պահանջում են բարձր օժիտ և արժեքավոր նվերներ, նույնիսկ ամուսնությունից հետո: Երբ աղքատ կանանց ընտանիքները չեն կարողանում պատասխանել անհագուրդ ամուսինների պահանջին, նրանք դեմ հանդիման են կանգնում դաժան, երբեմն էլ մահացու հարձակումների: Միայն 1987 թվականին, մոտ 1786 կին է սպանվել, որովհետև չեն պատասխանել իրենց ամուսինների օժիտի պահանջներին:[48]

Կանանց դեմ բռնության հասարակական խնդիրի այսպիսի մեծ և աճող ծավալները բնորոշ չեն ԱՄՆ-ին, այլ սովորական երևույթ է արևմտյան և նմանատիպ հասարակությունների մեջ: Ավստրիայում, ամուսնալուծությունների 59% դեպքում, մեղադրանք են ներկայացվում 1984 թվականի տարվա ընթացքի ընտանեկան բռնություններին:[49] 1992 թվականին,

[48] ԱՄՆ զեկույցը Հնդկաստանի Կանանց մասին, 1991թվ.
[49] Ջեդրիքլի էջ. 97

Աբուրդենը և Նաիբիթը, 1993 թվական, նշում են, որ Անգլիայում կանանց 50% -ին սպանել են իրենց ամուսինները կամ զուգընկերները[50] Հաղորդված և տեղի ունեցած այս բոլոր դաժանությունները, կազմում են նույն տարվա ոտնահարված կանանց միայն 22%-ը: Հաշվարկված է, որ կանանց ոտնահարության դեպքերի 88 % չեն զեկուցվել:[51]

Ըստ Ռուսական կառավարական գրառումների, միայն 1993 թվականին, «14,500 ռուս կին են սպանվել իրենց ամուսիններից: Մնացած 56,400 դարձել են հաշմանդամ, կամ ստացել են լուրջ վնասվածքներ»: ԱՄՆ-ի և Անգլիայի ընտանեկան ոտնահարման վիճակագրությունը ահազանգիչ է: «Ըստ Ընտանեկան Հետազոտության Բաժնի, Անգլիայի և Ուելսի սպանությունների 18 տոկոսը կանայք են, ում սպանել են իրենց ամուսինները, արձանագրված բռնության հանցագործությունների քառորդը ընտանեկան բռնության արդյունք են»:[52]

[50] Զեդրիքլի էջ. 97

[51] Բնակչության Զեկույցներ, Հատոր XXVII, h ամ ար 4, Դե կ . 1999

[52] Ջեյմս Միիք. «Մոսկվան արթնանում է ընտանեկան բռնության զոհերից»: Գարդիան, Հինգշաբթի, Հունիսի 22, 1995 թվական

Ժամանակակից հասարակությունների վերաբերմունքը կանանց և երեխաների, լինի Ամերիկա, Եվրոպա, Հնդկաստան, Ռուսաստան, Չինաստան կամ նույնիսկ մահմեդական հասարակություններ, որոնք իրենց կյանքում չեն կիրառում Իսլամը,նման է մինչ-իսլամական հասարակության, ջահիլիյահի: Իսլամը եկել է վերացնել կանանց և երեխաների չարաշահումը և վերականգնել կնոջ, երիտասարդի և նույնպես ծերերի արժանապատվությունը:

Աշխարհի շատ հասարակությունների մեջ տեղի ունեցող քաոսի պատճառով, ինչպես նշվել է, չարաշահումը ուղղված չէ միայն հասարակության թույլ անդամների դեմ, այլև ընդդեմ նրանց, ովքեր պատասխանատու են կրթության և դաստիարակության համար: Հիմնվելով Կարնեգի Հիմնադրամի զեկույցին, ԱՄՆ-ի ուսուցիչները, ովքեր ասում են, որ նրանց ոտնահարել են կազմում է 51%: Ինչ վերաբերում է նրանց, ում սպառնում են վնասներով, մասնաբաժինը 16 %, սակայն նրանք, ում վրա մարմնական հարձակում են գործել, կազմում է 7%[53]

[53] Maqmilani Ditwxakan O8acwujc, 1996, 15. 367

Կանանց մահմեդական տեսակետը Արևմուտքում այնքան է խեղաթյուրվել, Եվրոպայում և Ամերիկայում դեռ տարածված գաղափար է, թե մահմեդականները կարծում են, որ կանայք հոգի չունեն:

Ամեն դեպքում Սուրբ Ղուրանում Ալլահի հետ փոխհարաբերությունների սեռերի տարբերություն

գոյություն չունի, երկուսին էլ խոսք է տրվել նույն պարգևը բարիքի և նույն պատիժը չար վարքի համար:[54]

> **«Իրոք, տղամարդիկ, ովքեր հանձնվում են Ալլահին և կանայք, ովքեր հանձնվում են, տղամարդիկ, ովքեր հավատում են և կանայք, ովքեր հավատում են և տղամարդիկ, ովքերհնազանդվում են և կանայք, ովքեր հնազանդվում են և տղամարդիկ, ովքեր անկեղծ են և կանայք, ովքեր անկեղծ են և տղամարդիկ, ովքեր համդուրժում են և կանայք, ովքեր հանդուրժում են և տղամարդիկ, ովքեր հնազանդ են և կանայք, ովքեր հնազանդ են և տղամարդիկ, ովքեր ողորմություն են տալիս և կանայք, ովքեր ողորմություն են տալիս և տղամարդիկ, ովքեր պահք են պահում և կանայք, ովքեր պահք են պահում և տղամարդիկ, ովքեր համեստ են և կանայք, ովքեր համեստ են և կանայք ովքեր հիշում են Նրան, Ալլահը պատրաստել է նրանց համար ներում և մեծ հատուցում»** : Ղուրան 33:35

Միայն փոխհարաբերությունների մեջ է, որ դրվում է տարբերություն -տարբերություն, որը փաստացի գոյություն ունի- գործունեության տարբերությունը: Տարբերակի մեջ, որը կարող է ապշեցնել հեթանոս արաբներին, ովքեր կանանց զուրկ էին համարում մարդու իրավունքներից, ասվում է.

[54] Մարմադուքե Փիքթհալ. Սեռերի հարաբերությունները, 1925 թվականի զեկույց «Մահմեդական Կանանց Խղճալի վիճակը» www.islam for today.com

«Նրանք, կանայք, ունեն իրավունքներ ինչպես նրանք, Տղամարդիկ նրանց դեմ, չնայած տղամարդիկ նրանցից Մեկ աստիճան վեր են: Ալլահը Ամենազորն է, Ամենագիտակը »: Ղուրան 2:228

Քարոլը, 1983 թվականին, խոստովանել է, որ նա ապշել է գտնելով, որ Մահմեդական կինը, առաջինն է աշխարհում, ում տնտեսական և օրինական իրավունքները ճանաչել են: Նա նույնպես ավելացրեց, որ Իսլամի ընտանեկան համակարգը օրինականացվել է 1400 տարի առաջ, որպեսզի պաշտպանի ընտանիքը, հասարակության քարը

1993 թվականին, երկու հայտնի ֆեմինիստ հետազոտողներ Աբուրդենը և Նայսբիթը, ապշել էին գտնելով, որ Ղուրանը ի տարբերություն մյուս բոլոր կրոնական գրերի, կնոջը չի համարում տղամարդուց ավելի ստորին աստիճան: Նրանք գիտակցեցին, որ Մահմեդական Աշխարհի կանանց դեմ ուղղված արական սովորույթները, հիմնականում հիմնված են ոչ իսլամական հասարակական

սովորույթների կամ Իսլամական ուսմունքների սխալ մեկնաբանության վրա:[55] Քարոլը, 1983 թվականին, խոստովանել է, որ նա ապշել է գտնելով, որ Մահմեդական կինը, առաջինն է աշխարհում, ում տնտեսական և օրինական իրավունքները ճանաչել են: Նա նույնպես ավելացրեց, որ Իսլամի ընտանեկան համակարգը օրինականացվել է 1400 տարի առաջ, որպեսզի պաշտպանի ընտանիքը, հասարակության քարը:[56] Կանանց և տղամարդկանց դերի և իրավունքների հղումները, մանրամասնվել են Ղուրանի և մարգարե Մուհամմեդի ուսմունքների մեջ:

1. ԿԱՆԱՅՔ ՂՈՒՐԱՆԻ ՄԵՋ

Ղուրանը խոսում է, թե կանայք կյանքում ինչ տարբեր դեր են խաղում: Պատմության մեջ առաջին անգամ,այն հաստատում է կանանց ժառանգության, հարգանքի և արժանապատվության իրավունքները: Ղուրանը խոսում է կնոջ ճշմարտությանը աջակցելու, մարգարեներին ծնունդ տալու և տառապանքների դերի մասին: Ղուրանը նույնպես խոսում է պատմության միջով կանանց կյանքի տարբեր հոգեվարքի մասին : Ստորև նշվում են միայն մի քանի հատվածներ, որոնք ցույց են տալիս, թե այդպիսի իրավունքները Իսլամում ինչ աստիճանի են ճանաչվել:

Ղուրանը Փարավոնի կնոջ օրինակը ներկայացնում է որպես հավատարիմ անձ, ով հանուն Ալլահի ամեն տեսակի տառապանք ընդունեց:

Ալ-Թահրիմ:11

---

[55] Ջեդրինքի, էջ. 97, Ջոդրինքի էջ. 39
[56]Ջեդրիքլի. Էջ. 97

Եվ Ալլահը ուղարկել է օրինակ նրանց Ովքեր հավատացել են, կնոջը Ֆիրաունի, Փարավոնի, երբ Նա ասաց. «Իմ Տեր, Կառուցիր ինձ համար տուն Քեզ հետ Դրախտի մեջ և փրկիր ինձ Ֆիրաունից, Փարավոնից և Իր աշխատանքից և փրկիր ինձ մարդկանցից, ովքեր Հարստահարիչներ են:

Ղուրանը մանրամասն հաղորդեց Մարիամի և Հիսուս Քրիստոսի հրաշք ծնունդը և թե ինչպես նա պատասխանեց իր ժողովրդի, Հրեաների մեղադրանքներին, նրա ոչ ողջամիտ լինելուն: Իրոք, Ղուրանի ամբողջ գլուխը կրում է նրա անունը: Ղուրանի մեկ այլ երկար գլուխը կոչվում է «Կանայք», «Ան-Նիսաա»: Ղուրանը կնոջ դերի մասին խոսել է ապաշխարհությամբ և ճշմարտությունը ընդունելով: Օրինակ ալ- Ազիզի կնոջ ապաշխարհությունը, Մարգարե Հովսեփի մեղադրանքից հետո: (Հովսեփ 51-53)Մարգարե Սողոմոնի (Խ.Ա.Ո.Ն) Իսլամ ընդունելու հրավերը Շիբայի թագուհուն նույնպես մանրամասն նշվել է Ան-Նամլ : 44 գլխի մեջ:

Ղուրանը մեծ հարգանք է հատկացրել Մարիամին: Փաստորեն, մի ամբողջ գլուխ նվիրված է նրա հետաքրքրաշարժ պատմությանը, ի հակասություն ամոթալի մեղադրանքների, որոնք նշվում են Թալմութի մեջ նրա և նրա որդու Մարգարե Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) մասին:[57]

---

[57] Ռ. Փափան նկատում է. Ահա թե ինչ են ասում մարդիկ Մարիամի մասին, նա, ով ծագել է արքայազներից և կառավարիչներից, անբարոյականությամբ զբաղվեց ատաղձագործի հետ 5 … Արդյո՞ք Իսրայելի զավակները սրի քաշեցին նրանց միջև, նրանց …: Բաբելոնյան Թալմութ, Սոնքինո Մամուլ, Լոնդոն էջ. 725 106a-106b) «Այդպիսի աղբյուրների սովորությունն է, նվազեցնել Հիսուսի անձը, տալով նրան ապօրինի ծնունդ, կախարդանք և ամոթալի մահ… Բոլոր

Ալ-Իմրաան 35:37

Հիշեք, երբ Իմրանի կինը ասաց. «Ով իմ Տեր, ես երդվել եմ Քեզ, որ այն երեխան, որը իմ արգանդի մեջ է, նվիրել Քո ծառայությանը Ձերծ բոլոր աշխարհիկ գործերից, ծառայել Քո երկրպագության Վայրում, այսպիսով, ընդունիր այս ինձանից: Իրոք, Դու Ամենլսողն ու Ամենագիտակն ես:»

Այնուհետ, երբ նա ծնունդ տվեց իր զավակին, Մարիամին, Նա ասաց. «Ով իմ Տեր, ես իգական սեռի զավակ եմ Ծնունդ տվել» - և Ալլահը ավելի լավ գիտեր, ինչ էր նա ունեցել,- «Եվ արական սեռը նման չէ իգական սեռի և ես կոչել եմ նրան Մարիամ և ես Քո ապաստանն եմ խնդրում նրա և նրա ժառանգների Համար Շեյթանից, Սատանայից, վտարանդուց:»

Այսպիսով, նրա Տերը, Ալլահը ընդունեց նրան լավագույն Ընդունելությամբ: Նա թույլ տվեց նրան լավ դաստիարակվել և դրեց նրան Զաքարիայի հոգացության ներքո: Յուրաքանչյուր անգամ նա մտնում էր Ալ-Միհրաբ, այցելելու նրան, նա գտնում էր նրան ապահովված կենսամիջոցներով: Նա ասաց. «Ով, Մարիամ, որտեղի՞ց ես դու ստացել այս»: Նա ասաց. «Այս Ալլահից է»: Իրոք, Ալլահը մատակարարում է Կենսամիջոցներ, ում Նա է ցանկանում, առանց սահմանների:

Թոլեդո հրատարակչությունները պարունակում են վեճի պատմություն, որը Հիսուսը կրել է գրերով, ով ըստ այդ վեճերի , ապօրինածին է հայտարարվել»: Հրեա Հանրագիտարան էջ. 170

Ղուրանը իրենց պարտականություններով և արարքներով և հետագա կյանքի պարգևով տղամարդկանց և կանանց հոգեպես հավասար է ճանաչում:

Ալ- Նիսաա:124

Եվ, ով առաքինի բարի արարքներ է կատարում արական սեռ, Թե իգական և ճշմարիտ հավատացյալ է, (Ալլահի Եզակիության, Մահմեդական), այդպիսինը կմտնի Դրախտ և ոչ մի Անարդարություն, նույնիսկ արմավի կորիզի փոքրիկ չափով Չի լինի նրանց:

Ալ Հադիդ : 12

Օրը դուք կտեսնեք հավատացյալ տղամարդկանց և Հավատացյալ կանանց, իրենց լույսը վազում է նրանց և Նրանց աջ ձեռքերի առջևով: Ավետիս ձեզ այդ Օրը: Այգիներ, որի ներքո գետեր են հոսում, Դրախտ Բնակվելու այնտեղ հավերժ: Իրոք, այդ մեծ հաջողություն է:

Առ-Ռում :21

> **Եվ Նրա նշաններից է, որ Նա արարել է ձեզ համար Կանայք, ձեզանից, որ դուք կարողանաք գտնել Հանգստություն նրանց մեջ, և Նա դրել է ձեր միջև Ջերմություն և ողորմածություն: Իրոք այդտեղ են Նշաններ մարդկանց համար, ովքեր անրադառնում են:**

2. ԿԱՆԱՅՔ ՄԱՐԳԱՐԵՅԻ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԵՋ

Մարգարե Մուհամմեդը շատ անարդար սովորույթների բախվեց, որոնք կանանց դեմ հաստատվել էին մինչ իսլամական հասարակության մեջ: Տղամարդիկ մեծ շահ էին ստանում այն դերերից, որոնք իրենք էին վերագրել կանանց: Երբ Մարգարեն սկսեց դեմ քարոզել կանանց նկատմամբ արական սեռի վերաբերմունքի, Քուրեյշները կտրականապես դեմ եղան նրան: Այնուամենայնիվ, Աստվածային Հայտնություն էր,որ նա հասցներ մարդկանց անկախ նրանց անարդար հետաքրքրության:

Աբու Հուրեյրան հաղորդում է, որ Մարգարե Մուհամմեդը ասաց.

> «Թող նա լինի ձախողակ, թող նա լինի ձախողակ, Թող նա լինի ձախողակ»: Մեկը ասաց. «Ո՞վ է նա, օվ Ալլահի Մարգարե: Նա պատասխանեց», Մեկը Ով ապրել է տեսնելու իր ծնողներին կամ նրանցից մեկին և չի մտել դրախտ»: Ջեբիրն ասաց, որ նա լսել է, թե ինչպես է Ալլահի Մարգարեն ասում. «Մեկը, ով զրկված է բարությունից, Զրկված է բարությունից»:[58]

Անաս Իբն Մալիքը ասաց, որ Ալլահի Մարգարեն ասել է.

[58] Հաղորդված Մուսլիմից, 1758 էջ. 469

«Ով դաստիարակում է երկու դուստր, Նա և ես կգանք կողք- կողքի Դատաստանի Օրը….»[59]

3. ԿԱՆԱՅՔ և ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Իսլամում կրթության իրավունքը շնորհվել է հարյուր տարի առաջ, մինչդեռ շատ հեղինակավոր դպրոցներ հերքել են այդ: Աբու Սաիդ Ալ Քուդրին հաղորդել է, որ մի քանի կին խնդրեցին Մարգարեյին, նրանց համար օր հատկացնել, քանի որ տղամարդիկ վերցնում էին նրա ժամանակի մեծամասնությունը: Այդ խնդրանքին նա խոստացավ նրանց օր նվիրել ուսուցանելու համար….[60]

Մեկ այլ հադիս հաղորդում է, որ Մարգարեն ասել է. «Գիտելիք փնտրելը յուրաքանչյուր մահմեդականի պարտքն է»:

Սիգարը և Օլսոնը 1986 թվականին հաղորդեցին, որ արևմտյան երկրների համալսարանների

Սիգարը և Օլսոնը 1986 թվականին հաղորդեցին, որ արևմտյան երկրների համալսարանների մեծամասնությունը շատ երկար սպասեցին, մինչ սկսեցին ընդունել իգական սեռի ուսանողներ: Տիկին, Կյուրիին մերժեցին Ֆրանսիական Գիտությունների Ակադեմիայի Անդամակցությունը, չնայած նա 1911 թվականի Սորբոնի համալսարանի առաջին իգական սեռի պրոֆեսորն էր

[59] Հաղորդված Մուսլիմից, 1758 էջ 465

[60] Հաղորդված Ալ-Բուխարի, Գիտության Գիրքը, Հադիթ 87 էջ. 97

մեծամասնությունը շատ երկար սպասեցին, մինչ սկսեցին ընդունել իգական սեռի ուսանողներ: Տիկին, Կյուրիին մերժեցին Ֆրանսիական Գիտությունների Ակադեմիայի Անդամակցությունը, չնայած նա 1911 թվականի Սորբոնի համալսարանի առաջին իգական սեռի պորֆեսորն էր: Պետք է նշել, որ նրան Նոբելյան Մրցանակ են պարգևել 1903 թվականին:[61]

4. ԲԱԶՄԱԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՍԼԱՄԻ ՄԵՋ

Մարդիկ երբեմն խոսում են, կարծես բազմակնությունը Իսլամի սահմանումն էր: Այն այդքան էլ Իսլամի սահմանումը չէ, որքան Քրիստոնեության, (Քրիստոնեության մեջ դարեր շարունակ սովորույթ էր Քրիստոսից հետո), սակայն այն դեռ գոյություն ունեցող մարդկային միտում է, հաշվի նստելու համար և ի շահ տղամարդկանց և կանանց (կանանց հիմնականում), որպեսզի ենթարկվի կարգավորման:Խիստ միակնությունը երբեք չի հայտնաբերվել Արևմտյան երկրներում, սակայն հանուն միակնության կուռքի, կանանց և նրանց երեխաների անհամար բազմություն զոհ են գնացել և դաժանորեն տառապել: Իսլամը կործանեց բոլոր կուռքերը, որոնք միշտ հակված են վտարել Աստծո արարածների քանակը: Եվրոպայում, կնոջ երկրպագման կողքին մենք տեսնում ենք նրա անկումը և հուսահատությունը:

Մինչ Իսլամի գալուստը Արաբիայում, շատ աղքատ այրիներ մասնավորապես անհույս էին: Սուրբ Ղուրանը խրախուսեց այրիների կրկին ամուսնությունը: Այն օրինականացրեց ամուսնալուծությունը և ամուսնությունը մեկ այլ ամուսնու հետ, ուստի մինչ Իսլամի գալուստը

[61] Մաքգրեյն, 1993 , Ջերեքլի 60-61

ամուսնությունը վերափոխեց կնոջ ստրկության դիրքը քաղաքացիական պայմանագրի, որը տեղի է ունենում հավասարների միջև, սահմանափակվելով կողմի կամքով, որոշակի սահմանափակումներով, ավելի շատ կանանց դեպքում, ելնելով բնական պատճառներից, մտադրված, որպեսզի մարդիկ լրջորեն գործեն մինչ բաժանման որոշումը և մահով: Մարգարեն, երբ նա Արաբիայի գերագույնն էր, կնության առավ մի քանի այրի, որպեսզի ոչնչացնի հին արհամարհանքը նրանց նկատմամբ և ապահովի նրանց, որպես Պետության կառավարիչ:[62]

Իսլամը միակ կրոնն է,որը կանանց թույլատրելի քանակը սահմանափակում է մինչ չորսը: Այս փաստի մասին Ջոն Էսփոսիթոնը, Ջորջթաունի Համալսարանի կրոնի, միջազգային հարաբերությունների և Իսլամական ուսումնասիրությունների հայտնի պրոֆեսորը գրում է.

> Չնայած այն գտնում ենք շատ կրոնական և մշակութային Սովորությունների մեջ, բազմակնությունը, (կամ ավելի Ճշգրիտ բազմակնությունը), ավելի հաճախ նույնացվում էԻսլամի հետ, Արևմուտքի մարդկանց մտքերում:վ Փաստորեն, Ղուրանը և Իսլամական օրենքը ձգտում են Վերահսկել և կարգավորել կողակիցների քանակը, քան Տալ ազատ իրավունք: Հասարակության մեջ, որտեղ Չկան սահմանափակումներ,մահմեդականներին չի Ասվել կնության առնել չորսին, այլ փոխարենը Կնության առնել ոչ ավել քան չորսը: Ղուրանը Թույլատրում է տղամարդուն կնության առնել Մինչ չորս կին, եթե նա կարող է ապահովել և հավասար վերաբերվել

[62] Փիքթալ , www.Islam for today.com

> նրանց: Մահմեդականները ընկալում են Ղուրանի այս պատվիրանը որպես կնոջ դիրքի և ընտանիքի ամրացում, քանի որ այն ձգտում է երաշխավորել միայնակ կնոջ և այրու բարօրությունը հասարակության մեջ, ում արական բնակչությունը նվազում է պատերազմներից և սանձել անսահմանափակ բազմակնությունը:[63]

Սահմանափակ բազմակնության գաղափարը Ղուրանը ներկայացրել է որպես այնպիսի սոցիալական խնդիրների լուծում, ինչպիսիք են պատերազմի հետևանքով այրիների և որբերի քանակի աճը: Այն նաև մեծ դեր է խաղում մեծ քանակության մարդկանց բնական կարիքների բավարարմանը, մանավանդ այն հասարակություններում, որտեղ կանանց քանակությունը գերազանցում է տղամարդկանց:

Ան-Նիսա :3

> «Եվ եթե դուք վախենում եք, արդար չլինել Որբերին, ապա կնության առեք, ինչը բարիք է ձեզ Կանանց միջից երկու, երեք կամ չորս: Սակայն, եթե Դուք վախենում եք, որ դուք արդար չեք լինի նրանց, Ապա միայն մեկը, կամ ով ձեր աջ ձեռքին է պատկանում: Դա ավելի հավանական է, որ դուք չեք անի Անարդարություն»:

---

[63] Ջոն Լ. Էսփոսիթո Իսլամ Ճիշտ Ուղղի, Օքսֆորդ, Օքսֆորդ Համալսարանի Մամուլ, 1988, էջ. 97

Երբ առաջին անգամ ներկայացրերցին բազմակնության այս կարգավորումը, իրականում այն սահմանափակեց անսահմանափակ բազմակնությունը, որը կիրառում էին արաբները Իսլամից առաջ: Չնայած կարգավորումը տղամարդուն իրավունք է տալիս, բարի պատՃառներով կիրառել բազմակնությունը, սակայն դրա ետևում նրանք պետք է հետևեն խիստ պայմաններին և պատասխանատվությունններին:Իսլամը սահմանափակել է բազմակնությունը և լիովին բավարարել է տղամարդու բազմակին բնույթը, մինչ սահմանափակել է և դաժանորեն պատժել է տղամարդկանց, ովքեր փնտրում են արտամուսնական հարաբերություններ: Իսլամը սահմանելով բազմակնությունը և որոշելով նրա կիրառման խիստ պայմանները, չափավոր դիրքորոշում է տվել Հին Կտակարանի և Հռոմեացիների, Պարսիկների և մինչ Իսլամական արաբների սովորույթի միջև և չդիտարկված ամուրիության, որը քարոզել են որոշ վերջին Քրիստոնեական սրբեր:

> Սահմանափակ բազմակնության գաղափարը Ղուրանը ներկայացրել է որպես այնպիսի սոցիալական խնդիրների լուծում, ինչպիսիք են պատերազմի հետևանքով այրիների և որբերի քանակի աճը: Այն նաև մեծ դեր է խաղում մեծ քանակության մարդկանց բնական կարիքների բավարարմանը, մանավանդ այն հասարակություններում, որտեղ կանանց քանակությունը գերազանցում է տղամարդկանց

Ուստի, որպեսզի լուծի անհայր ընտանիքների խնդիրը, Ղուրանը խրախուսում է տղամարդկանց, ովքեր կարող են կրել պատասխանատվությունը և լինել արդար հոգացության տակ առնելու աղքատ ընտանիքներ, կնության առնել ընտրելի այրիներ և իգական սեռի որբեր, ովքեր ողբերգությունների զոհեր են: Այս միջոցի հիմնավորումն է ընդահանուր առմամբ փրկել հասարակությունը անբարոյական սովորույթին անձնատուր լինելուն կամ աղքատության կամ բնական սեռական կարիքից չամուսնացած կնոջը:

Ազատամիտ մարդիկ կարող են իրենց խնդիրներին բնական և խելամիտ լուծումներ տալ, ճանաչելով կանանց և նրանց երեխաների լիիրավ և օրինական իրավունքները: Իր ՛՛Պայքար Հանձնվելու՛՛ գրքի մեջ, Ջեֆրի Լանգը 1995 թվականին այդ ժամանակ Հանրային Հեռուստատեսությամբ եթեր արձակված մի ծրագրում հաղորդում է, թե արդյոք տղամարդիկ բնածին բազմակին են և կանայք բնածին միասեր:1987 թվականին, Կալիֆորնիայի Համալսարանի ուսանողական Բերքլի թերթը հարցում ենթարկեց մի շարք ուսանողներին, արդյոք իրենց կարծիքով տղամարդկանց պետք է օրինականորեն թույլատրել ունենալ ավելի քան մեկ կին, ի պատասխան Կալիֆորնիայում արական սեռ ամուսնության թեկնածուների պակասի: Ի զարմանս շատ ֆեմինիստների, հարցվածների համարյա բոլորը խրախուսեցին գաղափարը: Մեկ նույնիսկ ասել է, որ բազմակին ամուսնությունը կբավարարի նրա սեռական և զգացմունքների կարիքները:[64] Եկեղեցու մի հատվածը,

[64] Ջեֆրի Լանգ. «Պայքար Հանձնվելու» Բելթսվիլ, Մերիլենդ, Ամանա Հրատարակչություն, 1995թվ. Էջ. 162-3

Մորմոնները, որը դրաձել է ԱՄՆ-ի հաստատված եկեղեցիներից մեկը, քարոզում է բազմակնությունը, իր աճող անդամների մեջ:[65]

1994 թվականին Ջեյն Գուդվինը, Ամերիկացի սոցիոլոգը, կարծում է, որ շատ ամերիկացի կանայք կգերադասեին երկրորդ կնոջ կարգավիճակը, քան ապրել միայնակ կյանք Նյու Յորքի կամ Չիկագոյի մռայլ բնակարանում ազատ հասարակության մեջ:[66] Փաստորեն, ընդհանուր առմամբ, արական սեռի ներկայացուցիչները շարունակում են միակնությամբ պաշտպանված լինել, մանավանդ հասարակության մեջ, որը չի պատժում արտամուսնական սովորույթը, մինչ մարմնավաճառները, կանչով աղջիկները, սիրուհիները, քարտուղարուհիները, մոդելները, դերասանուհիները, վաճառողուհիները, մատուցողուհիները և ընկերուհիները մնում են իրենց խաղահրապարակում: Իրականում, արևմուտքի արական սեռի գերակշիռ ներկայացուցիչները կտրականապես դեմ են բազմակնությունը, որովհետև այն ստիպում է տղամարդուն հավատարմույթուն որդեգրել:

Անկախ իմ կարծիքին, որը վերաբերում է բազմակնությանը, Դոկ. Լե Բոնը աջակցում է ասելով. «Բազմակնություն վերադարձը, որը սեռերի բնական փոխհարաբերությունն է, կբուժի շատ չարիքներ. Մարմնավաճառություն, վեներական հիվանդություններ, ՁԻԱՀ, հղիության արհեստական ընդհատումներ, ապօրինի երեխաների տառապանք, միլիոնավոր չամուսնացած կանանց և այրիների դժբախտություն, որը

[65] Թ. Սուլիվան, Ք. Թոմսոն, Ռ. Ռայթ, Ջ. Գրոսս և Դ. Սփեդի, էջ. 658
[66] Ջերեքլի, 1997, էջ. 80

սեռերի անհավասարակշռության և պատերազմների արդյունք է, նույնիսկ դավաճանությունը և խանդը»:[67]

Երբ Իսլամական համակարգը, լիովին կիրառվում է, այն հեռու է վանում վտանգների գայթակղությունը, մարմնավաճառության սարսափը և ծանր ճակատագիրը, որը պատահում է Արևմուտքի անհամար կանանց և երեխաներին, տհաճ բազմակնության հետևանքի արդյունքում: ՛՛Իսլամի հիմնական սկզբունքն է յուրաքանչյուր կնոջ նկատմամբ տղամարդու լիակատար պատասխանատվությունը և վարքի հետևանքները: Եթե այն հեռու է, նմանապես շատ ռոմանտիկայով, որը հյուսել են Արևմտյան հեղինակները սեռական փոխհարաբերությունների փաստերի շուրջ, ռոմանտիկան պատրանք է և մենք երբեք չպետք է սգանք պատրանքի կորուստը:

Վերցրեք ամենաշատ ընթերցվող Եվրոպական գրականությունը և դուք կգտնեք կնոջ սերը, որպես տղամարդու երկրային կյանքի առարկա, (այսինքն, կատարյալ ձևով, մեկ կնոջ, ընտրյալի, որին նա գտնում է շատերին փորձելուց հետո): Երբ գտնում են այդ կնոջը, ընթերցողը ենթադրում է, որ երկուսի միջև տեղի է ունենում «հոգիների միացում»:Եվ այդ է կյանքի նպատակը: Այդ ողջախոհություն չէ, այլ աղբ: Սակայն այն հանդիսանում է ամուսնության հետ կապված քրիստոնեական Եկեղեցու ապրանքանշան:Կինը գրավիչ, սակայն արգելված արարած է, էությամբ մեղսագործ, բացառությամբ առեղծվածային միության, որը բնորոշ է

[67] Սուլայման Ա. Մ՛Ա Շաքասի «Ինչպես է Իսլամը Բարձրացնում Կնոջ Դիրքը»

Քրիստոսին և նրա Եկեղեցուն, ի շնորհիվ քահանայական օրհնության:՛՛[68]

5. Ո՞Վ Է ՕԳՏՎՈՒՄ ՄԻԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Ինչպես ներկայացնում է Իսլամական ընտանեկան համակարգը, բազմակնության մեջ ամուսինը կրում է կնոջ կամ կանանց նկատմամբ լիարժեք նյութական և այլ հասարակական պատասխանատվություն: Ուստի, արևմտյան հասարակություններում կիրառվող խիստ միակնությունը, ելնում է տղամարդու հետաքրքրություններից: Ջոնսը և Ֆիլիպսը, 1985 թվականին նշում են, որ «մի քանի արարկան սեռի ներկայացուցիչներ, ինքնարդարությամբ հաստատում են, որ միակնությունը պահպանվում է, որպեսզի պաշտպանի կանանց շահերը:

Ինչպես ներկայացնում է Իսլամական ընտանեկան համակարգը, բազմակնության մեջ ամուսինը կրում է կնոջ կամ կանանց նկատմամբ լիարժեք նյութական և այլ հասարակական պատասխանատվություն: Ուստի, արևմտյան հասարակություններում կիրառվող խիստ միակնությունը, ելնում է տղամարդու հետաքրքրություններից

Սակայն, ե՞րբ է արևմուտքի արական սեռի ներկայացուցիչը անհանգստանում կնոջ իրավունքներով: Արևմտյան հասարակությունը հասարակական-տնտեսական հանելուկ է, որը ճնշում է կանանց և վերջին տարիներին առաջնորդում է կանանց

[68] Փիքթհալլ, www.Islam for today.com

ազատագրման վերելքի, սկսած սուֆրժիստուհիներից, վաղ տասնիններորդ դարից մինչ մեր օրերը: Իրականությունը այն է, որ Միակնությունը պաշտպանում է արական սեռի իրավունքը, խաղալ առանց որևէ պատասխանատվության, քանի որ դավաճանության մակարդակը նրանց մեջ, հաճախ ավելի բարձր է, քան իգական սեռի ներկայացուցիչների»:[69]

Չնայած արևմտյան շատ կանայք կառչում են այսպես կոչված սեռական հեղափոխությունից, նրանք են տառապում հակաբեղմնավորիչների բարդություններից, արհեստական հղիության վնասվածքներից և արտամուսնական երեխաների ամոթից: Միայն ԱՄՆ-ում, 1991 թվականի տվյալներով, հազար ծնունդներից քառասուն հինգը 15-44 տարիքային սահմանի չամուսնացած կանանց ծնունդներն են: Հարկատուներին այն արժենում է 25 բիլիոն $ նպաստների վճար:[70]

1985 թվականին, տիկ. Ջոնսը և պրն. Ֆիլիպսը խոսել են բազմակնության հաստատման մեկ այլ տրամաբանական պատճառների մասին: Նրանք նշել են, որ աշխարհում կանանց գերազանցությունը հաստատուն փաստ է: Տղաների մահացությունը ավելի բարձր է: Ընդհանուր առմամբ կանայք ավելի երկարակյաց են, քան տղամարդիկ, հարկ չկա նշել, ամբողջ աշխարհում ամեն օր պատերազմների հետևանքով մեծ քանակությամբ երիտասարդներ կնքում են մահկանացուն: «Ամեն դեպքում,հարաբերակցությունը տատանվում է մեկ երկրից

---

[69] Ջ. Ջոնս և Բ. Ֆիլիպս, Կրկնակի Ամուսնությունը Իսլամում, 1985 էջ. 5

[70] Առողջապահության Վիճակագրության Ազգային Կենտրոն, Մաքմիլանի Տեսական օրացույց, 1996թվ. էջ. 320-322

մյուսը, կանանց քանակը մինչ այժմ գերազանցում է տղամարդկանց: Հետևաբար շատ կանայք մրցակցում են նվազող արական սեռի համար: Ուստի, միակին հասարակությունների մեջ միշտ գոյություն կունենա կանանց լայն հատված, ովքեր ի վիճակի չեն լինի օրինական ճանապարհով լրացնել իրենց սեռական և ֆիզիոլոգիական կարիքները: Վերելք ապրող թույլատրելի հասարակության մեջ նրանց ներկայությունը նույնպես նպաստում է արևմտյան ընտանիքի կառուցվածքի մասնատմանը»:[71] Բազմակնության մասին մեր ունեցած հակիրճ քննարկումից հետո, կարծես կանայք պետք է շահագրգռված լինեն իրավաբանորեն օրինականացնել և վերակարգավորել բազմակնությունը, ինչպես խոստովանել է Իսլամը, որովհետև այն ապահովում է անհայտ հասարական- տնտեսական պաշտպանությունը, ինչպես նաև բավարարում է երկու սեռերի իրական կյանքի խնդիրները:

6. ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄԸ ԱՎԵԼԻ ԼԱՎ Է

Եթե ճիշտ է, ինչպես առաջարկում է կյանքի փորձը, և Եվրոպայի և Ամերիկայի կանանց իրավունքների փաստաբանները,երբեք չեն ձանձրանում հայտարարել, որ կանանց հետաքրքրությունները տարբեր են տղամարդկանցից, որ կանայք իրոք, ավելի երջանիկ են իրենք, իրենց ամենօրյա կյանքում և ընդունակ են առաջընթացի որպես սեռ,այլ ոչ թե տղամարդկանց ստորաքարշություն, ապա Իսլամական կանոնը, որը կնոջը իր ոլորտում սիրուհի է դարձնում, չի տարաձայնում մարդկային բնույթին: Թեև ամեն տեսակի նախապատրաստություն է կատարվում, շարունակելու

[71] Ջ, Ջոնս և Բ. Ֆիլիպս, 1985, էջ. 6-7

մարդկային ռասսան և թեև կնոջ փոխհարաբերությունը ամուսնու և մոտիկ բարեկամների նկատմամբ այնքան մեղմ և այնքան մտերմիկ է, ինչպես Արևմուտքում, կնոջ հասարակական կյանքը իրենց մեջ է : Գոյություն չունի ոչ մի «խառը լոգանքներ», խառը պարեր, տարասեռ սիրախաղեր, հրապարակայնություն: Սակայն ըստ Իսլամի որոշակի ուսմունքի, չպետք է լինեն կնոջ հնարավորությունների որևէ սահմանափակումներ իր իսկ բնագավառում զարգանալու և վերելք ապրելու: Ուստի, ոչինչ չի խանգարում կանանց դառնալ բժիշկներ, իրավաբաններ, պրոֆեսորներ, քանրոզիչներ և առևտրականներ և այլն, սակայն նրանք պետք է դառնան կանանց քոլեջների շրջանավարտներ և գործեն կանանց շրջանում:[72]

Կանանց և տղամարդկանց մեկուսացումը ճանաչվել է կանանց մեծ շահ: Փաստորեն, Պենտագոնը այս սկզբունքը որդեգրել, որպես շատ խնդիրների լուծում, ներառելով սեռական ճնշումը, առանց Իսլամի, որպես կյանքի համակարգի գոհունակության,որը քարոզում է այս սովորույթը որպեսզի պահպանի բարոյականություն և հասարակական խաղաղությունը և ապահովությունը:Այնուամենայնիվ, արքայազն Չարլզը Իսլամի և Արևմուտքի մասին իր ճառերից մի քանիսի մեջ ընդգծել է Իսլամի մեծ ներդրումը ապահովելու ոչ-մահմեդական հասարակությունները, հաղթահարելու իրենց ամենալուրջ բարոյական և հասարական խնդիրները:

Ամերիկյան Պաշտպանության Քարտուղար, Ուլիյամ Քոհենը, հայտարարեց համապարփակ ծրագրի առաջին

[72] Փիքթհալ, www.islamfortoday.com

փուլը, պահպանելու արական և իգական սեռի զինվորների բարոյականության ողջամիտ մակարդակը: Ծրագիրը նշել է ներկայիս խառը շենքերում արական և իգական սեռի զինվորների մշտական բաժանմունքներ առանձնացնելու կարևորությունը:Սա միայն ժամանակավոր լուծում է, մինչ կկառուցվեն նոր առանձնացված կառույցները:Ռազմածովային նավատորմը նույնպես թողարկել է մի շարք խիստ հրահանգներ, որոնք արգելում են իգական և արական սեռերի ներկայացուցիչների ներկայությունը փակ դռների ետևում: Այս հրահանգները ներկայացվել են որպես կանոն, որոնք պետք է հարգեն բոլոր զինվորները, մասնավորապես նավատորմի նավերի: Պաշտպանության Քարտուղարը նշել է, որ նման միջոցառումների հիմնավորումն է ապահովել զաղտնիության ողջամիտ մակարդակը և Պաշտպանության տարբեր ոլորտների անդամների ապահովությունը: Այդ նոր կանոնակարգերից են, մերկ կամ ներքնաշորերով քուն չմտնելը և մեռյալ ժամերին դռներին ամուր փակելը: Նրանք նույնպես արգելեցին իգական սեռի զինվորների ներկայությամբ պոռնոգրոֆիկ ֆիլմերի դիտումը և պարտադրեցին հագուստի և լողազգեստի հստակ մանրամասն կանոնակարգեր:[73]

Այստեղից հարց է ծագում, թե ինչու է աշխարհի ամենաժամանակակից երկիրը կիրառում նմանատիպ կանոնակարգեր: Պատասխանը պարզ է. Սեռական ճնշումը անհավատալի ահազանգող մակարդակի է հասել և դարձել է ազգային անվտանգության և բարոյականության սպառնալիք: Իգական սեռի ներկայացուցիչների սեռական ճնշման հազարավոր

[73] Ընտանիքը, Հունիս 1998, Խնդիր 59, էջ. 3

բողոքներ հնչեցրեցին ահազանգը: Ամերիկյան և աշխարհի այլ օրենսդիրներ պետք է լրջորեն խորհեն նմանատիպ կարգավորումների մասին,բոլոր կառավարական հաստատություններում, ներառելով Սպիտակ Տունը, առանձնապես Քլինթոն -Մոնիկա գործի հետևանքներից հետո:

1993 թվականին[74] Մաք Գրայրը ուղղեց այն փաստը, որ մեկուսացումը կրթության բնագավառի մեջ բխում է ի շահ իգական սեռի ուսանողների, ովքեր տղաներից ենթարկվում են անտանելի ճնշման և ցավի:

Ինը իգական սեռի գիտնականներից ութը, ովքեր Նոբելյան Մրցանակ են ստացել, միայն իգական բարձրագույն դպրոցների շրջանավարտներ են:

1993 թվականի մայիսին, Նյու Յորք Թայմսը «Մեկուսացումը Ավելի լավ է»:[75] խորագրով մի զեկույց է հրատարակում: Զեկույցի հեղինակն էր Սյուզան Օսթրիչը, ով ԱՄՆ-ի հազվագյուտ, միայն կանանց քոլեջի շրջանավարտ էր: Ամերիկացիների համար շոկ էր այն փաստը, որ իգական սեռի համար հատկացված քոլեջների աղջիկները ակադեմիական ավելի մեծ հաջողությունների են հասնում,քան խառը քոլեջների իրենց գործընկերները: Նա իր հայցին ակաջցում է հետևյալ վիճակագրությամբ.

1. Միայն իգական սեռի քոլեջների աղջիկների ութ տոկոսը, Չորս տարի ուսումնասիրում են բնագիտություն և մաթեմատիկա, ի տարբերություն խառը քոլեջների երկու տարվա ուսումնասիրության:

---

[74] Ջեղրեքլի 1997, էջ. 72

[75] Ընտանիք Օգոստոս 1994, էձ. Էջ. 7

2. Իգական սեռի դպրոցների ուսանողները ցուցաբերում են ավելի բարձր ԴԿՄ, Դասարանային Կետի Միջին, քան խառը Քոլեջների աղջիկները: Այս հանգեցնում բուհ ընդունվող իգական սեռի ուսանողների ավելի մեծ քանակի: Փաստորեն, իգական սեռի ավելի շատ ուսանողներ են ստանում Դոկտորի աստիճան են:
3. Ըստ Ֆորչուն Ամսագրի 1000 Ամերիկյան ամենամեծ ընկերությունների հոգաբարձուների խորհրդի կին անդամների մեկ երրորդը, միայն իգական սեռի քոլեջների շրջանավարտներ են: Այս թվի նշանակությունը գիտակցելու համար, մենք պետք է տեղյակ լինենք, որ միայն իգական սեռի քոլեջների շրջանավարտները կազմում են տարեկան շրջանավարտների միայն 4 % :
4. Մաթեմատիկայի բնագավառի իգական սեռի պրոֆեսորների 43% և ինժեներիայի բնագավառի պրոֆեսորների 50% միայն իգական սեռի քոլեջների շրջանավարտներ են:

> Սա ինքնին Արևմտյան աշխարհի ևս մեկ ապացույց է, որը սատարում է Իսլամական սկզբունքների վավերականությանը և կիրառելիությանը, որպես համընդհանուր օրենքներ, որոնք առաջնորդում կամ կարգավորում են մարդկային վարքը: Հնդիկ քաղաքագետ և լրագրող Քոֆիի Լալջափան եզրակացրեց. Բացառությամբ Իսլամի, ոչ մի այլ կրոն ունակ չէ լուծելու ժամանակակից կյանքի խնդիրները....[76]

Միայն Իսլամը ունի այս բարդ խնդիրների, անբարոյականության և ընտանեկան արժեքների կործանման կիրառելի լուծումներ: Այն ապահովում է կյանքի կատարյալ համակարգ, որը հաշվի առնելով մարդկային կարիքները պարգևում է արժանապատվություն և երջանկություն, հասարակության բոլոր անդամներին և դրանք բավարարում է ամենապատվելի և

Միայն Իսլամը ունի այս բարդ խնդիրների, անբարոյականության և ընտանեկան արժեքների կործանման կիրառելի լուծումներ: Այն ապահովում է կյանքի կատարյալ համակարգ, որը հաշվի առնելով մարդկային կարիքները պարգևում է արժանապատվություն և երջանկություն, հասարակության բոլոր անդամներին և դրանք բավարարում է ամենապատվելի և հարգալից ձևով

[76] Իմադ Խալիլ, Նրանք Ասում են Իսլամի Մասին, 1994, Իսլամական Ապապագ , Մայիսի 24, 1994թվական, էջ. 12

հարգալից ձևով: Այս ամբողջական համակարգը մարդու շահարկման ենթակա չէ, որպեսզի բավարարի նրա ժամանակավոր հետաքրքրությունները, այլ Աստվածային է հաշվի առնելով մարդկային բնույթը:Այսպիսով,Իսլամը պարզ և խիստ ուրվագծված կանոններ և իրավունքներ է սահմանում հասարակության բոլոր անդամների համար, անկախ իրենց ռասայի, սեռի և կրոնի, որը հիմնված է միայն փոխադարձ պատասխանատվությունների և լիազորությունների համակարգի վրա: Այնուամենայնիվ, Իսլամից խուսափում են և նույնիսկ կասկածամտանքով են դիտում այն, ելնելով մի շարք պատճառներից . Ա. Հրեաների կառավարած մամուլը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում, որպեսզի ներկայացնի Իսլամը որպես վայրագ կրոն, որը նունյիսկ միջին դարերի համար լավ չէ: Ջիհադը Ամերիկայում և Սիգեյում օրինակներ են այն բանի,թե կինոարտադրությունը ինչ է անում, որպեսզի մարդկանց մտքերում, ովքեր չունեն ճշգրիտ գիտելիքներ Իսլամի մասին, խեղաթյուրեն Իսլամի պատկերը: Միջին Արևելքի ուսումնասիրությունների փորձագետները, ինչպիսիք են արևելագետ Բեռնարդ Լեվիսը, Դանիել Փայփսը և Ջուդիթ Միլլերը անպատասխանատու դեր են խաղացել,սխալ վերաբերմունքն ներկայացնելով Իսլամի անկեղծ հաղորդագրության մասին, այն մարդականց մտքերում, ովքեր կյանքի ուղղու մեծ կարիք ունեն: Այունամենայնիվ, շատ մտավորականներ չեն խաբվել այս քարոզչությամբ և ի վիճակի են եղել փնտրտուքից և շատ արգելքներ հաղթահարելուց հետո գտնել ճշմարտության իրենց ուղղին: Լավագույն օրինակներ են Ջեֆրի Լանգը, Կանզաս Համալսարանի Մաթեմատիկայի պրոֆեսորը, և Մ. Հոֆմանը, Մարրոկոյում Գերմանիայի Դեսպանը: Բ. Սահմեդականների մեծամասնությունը իրենց ոչ

Իսլամական գործողություններով խթան են հանդիսանում Իսլամի արդեն շեղված պատկերին, որը կողմնակալ մամուլը չափազանցնում և ընդհանրացնում է: Գ. Շահազրզիռ մահմեդականների անկարողությունը Իսլամը աշխարհին ներկայացնել գրավիչ կերպով և բացահայտել այս համընդհանուր ուսմունքի թյուրիմացությունները և թյուրըմբռնումները:

Վերջին տարիներին արևմուտքի կանայք, ստիպված էին իրենց պարզ օրինական իրավունքներ քարոզել, ինչպիսիք են ամուսնացած կնոջ ունեցվածքը, որը Իսլամը միշտ ապահովել էր: Նրանք ստիպված էին պայքարել, որպեսզի արևմուտքի տղամարդիկ ընկալեն, փաստը, որ կնոջ հետաքրքրությունները նույնական չեն տղամարդկանց հետաքրքրություններին, փաստ որին ստիպված էր նպաստել Սուրբ Օրենքը: Արևմուտքում, կանայք ստիպված էին քարոզել, որպեսզի ստանան իրենց իրավական և քաղաքական գոյության ճանաչում, որը Իսլամը միշտ էլ ճանաչել է: Իսլամում նրանց տղամարդիկ ապահովել են կանանց իրավունքները և տղամարդիկ կհաղթեն և կապահովեն հետագա իրավունքների պահանջները, որպեսզի լրացնեն Շարիաթի ոգին: Այս ազատության մեջ, սեռերի ոչ մի պայքար չի լինի:Հետևաբար, իրոք, գոյություն չունի Արևմուտքի կանանց գործի նմանակը:

Անկախ Իսլամի դեմ արված որոշ սուբյեկտիվ արևմտյան ԶԼՄների հարձակումների, որոնք հիմնված են քաղաքական դրդապատճառների վրա, մասնավորապես ինչ վերաբերվում է կանանց, Դեյլի Մեյլը Դեկտերմբերի 2, 1993 թվականին, էջ. 39 հաղորդում է, որ այդ ժամանակահատվածում,ավելի քան 20,000 Բրիտոններ հնարավորություն են ստացել ընդունել Իսլամը որպես իրենց կյանքի ուղղի: Ինչու՞ պետք է այդ կանայք պետք է

Իսլամ ընդունեին, եթե նրանք հավատային մամուլի քարոզչությանը: Նրանցից մեկը հաղորդեց, որ.

> «Մահմեդական դառնալը փոխեց իմ կյանքը և բերեց ինձ շատ խաղաղություն և բավարարություն... ես չեմ տեսել, թե ինչ եմ արել ետընթաց հայացք գցելով, ես այն տեսնում եմ որպես ազատագրում»:[77]

Մեկ այլ դավանափոխ, ով գրող էր և ատոմակայանի վերահսկչի դուստր, ասաց տղամարդկանց և կանանց մեկուսացման և հիջաբի դերի մասին.

> «Ի տարբերություն արևմտյան մշակույթի շփոթող ուղերձի, Որը կանանց խրախուսում է սեքսուալ երևալ, բայց Նրանց դատապարտում է, բռնաբարության հրահրման, Հիջաբը հստակ ազդանշան է տվել, որ կանայք չեն Եկել այս երկիր իրենց թափահարելու համար:»[78]

Երբ Ավստրալիացի Տիկ. Միսլի Քաթոլին, ով իր դստեր հետ միասին ընդունեց Իսլամ հարցրեցին. «Թե ինչու՞ եք դուք Իսլամ ընդունել» Նա պատասխանեց ասելով.

> «Սկզբում, ես ցանկություն կհայտնեմ ասելու,որ ես ընդունեցի Իսլամ, Որովհետև ես ներքուստ մահմեդական էի, առանց Գիտակցելու այդ: Մանուկ հասակից, մի քանի պատճառներից Ելնելով ես կորցրեցի Քրիստոնեության նկատմամբ իմ հավատքը: Ամենակարևորը այն էր, որ երբ ես հարցնում էի Քրիստոնյային, Արդյոք նա մեկն է նրանցից ովքեր կոչ են արել հոգևորականների Կամ

[77] Դեյլի Մեյլ, Դեկտեմբերի 2, 1993 թվ. էջ. 39
[78] Դեյլի Մեյլ, Դեկտեմբերի 2, 1993 թվ. էջ 42

> հասարակության, մի բանի մասին, որը եկեղեցի է կոչվում: «Դուք պետք է հավատաք նրանց»: Քրիստոնեությանը Հավատալու ժամանակ, ինձ վրա ազդեցություն գործեց Այն, ինչ ասացին մեզ, որ Իսլամը կատակ էր: Սակայն, երբ Ես ընթերցեցի դրա մասին, սխալ գաղափարները հեռացան: Երկար չտևեց, երբ ես սկսեցի փնտրել որևէ մահմեդական, Նրանց տալու այն հարցերը, որոնք պարզ չէին ինձ: Այստեղ իմ և իսլամի միջև եղած արգելքները պատռվեցին: Ինչ հարց որ ես ունեի, ես ստացա համոզիչ պատասխան, Շատ հակառակը նրա, ինչ ես սովորություն ունեի լսելու Երբ ես հարցնում էի Քրիստոնեության մասին: Երկար ընթերցումներից և ուսումնասիրություններից հետո, Ես որոշեցի, իմ դստեր հետ, ընդունել Իսլամ և մենք Անվանեցինք մեզ Ռաշիդահ և Մահմուդահ:´´[79]

Անգլիացի կին, լեդի Ավենին Զեյնբ Քոփհանդին, նույնպես հարցրեցին Իսլամ ընդունելու պատճառը: Նա հաղորդեց.

> «.... երբ աճում էր Իսլամի մասին իմ ընթերցումները և ուսումնասիրությունները, իմ համոզվածությունը, որ այն տարբերվող է մյուս այլ կրոններից աճում է: Այն հանդիսանում է ամենահարմարավետ կրոնը Կենցաղային կյանքի համար և այն ամենաունակն է Ուղղելու մարդկությունը երջանկության և խաղաղության Ուղղու: Այսպիսով, ես չտատանվեցի հավատալ, որ Ալլահը, Ամենաբարձրյալը մեկն է և, որ Մովսեսը, Հիսուսը, Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) և նրանց նախորդները մարգարեներ էին, ովքեր

---

[79] Բաուանի, 1984 էջ. 134-6 , Խալիդ Ալ- Քասիմ, Նամակ Քրիստոնյային. Դար Ալ- Ուաթան, Ռիյադ, 1995, էջ. 76

> Ստացան հայտնություններ իրենց Տիրոջից.... Մենք չենք Ծնվում մեղսագործ, ոչ էլ մենք որևէ մեկի կարիքը ունենք Ով կհեռացնի մեր մեղքերը կամ բարեխոս կլինի մեր և Ամենաբարձրյալ Ալլահի միջև... Այն չունի որևէ բարդ, Ծանր աստվածաբանական ուսմունքներ... »[80]

Մարգարեթ Մարկուսը, նախկին հրեա ամերիկացի մտավորական և գրողը, անկեղծորեն բացատրեց Իսլամ ընդունելու հիմնավորումը,իր բարեփոխումները քննարկելուց հետո,որը վերաբերվում էր հրեա դաստիարակությանը առ բոլորովին աշխարհիկ հասարակության, ասելով.

> Ես չընդունեցի Իսլամ իմ հայրերի ժառանգությունից, Կամ ժողովրդից դուրս: Գոյություն չի ունեցել այնքան մեծ Ցանկություն ժխտելու, որքան լրացնելու: Ինձ համար Այն նշանակում է անցում մի մահամերձից և ծխականից Դեպի դինամիկ և հեղափոխական հավատք, լի Համընդհանուր գերակայությամբ:

Յուրաքանչյուր նոր մահմեդական անցնում է փորձություն և շատ մարտահրավերներ է ընդունում, որպեսզի հնազանդվի Ալլահին: Ամիրան, Արկանզասի ամերիկացի աղջիկը, նրանցից մեկն է:

> Ես ծնվել եմ ԱՄՆ-ի Արկանզաս նահանգում, Ամերիկացի քրիստոնյա ծնողներից և ես մեծացա այդ միջավայրում:Իմ արաբ ընկերների համար ես

---

[80] Բաուանի, 1984, էջ. 130-1 Խալիդ Ալ- Քասիմ. Նամակ Քրիստոնյային. Դար Ալ- Ուաթան
Ռիյադ, 1995, էջ 75

սպիտակ ամերիկացի եմ, սակայն փառք Ալլահին, որ Իսլամը չի ճանաչում գույն, ռասա կամ ազգություն: Առաջին անգամ, երբ ես երբևէ տեսել եմ մահմեդականի, Ես Արկանզաս համալսարանի քոլեջում էի: Ես ընդունում եմ, Որ սկզբում ես սևեռված էի մահմեդական կանանց կրած Տարօրինակ հագուստին... և չէի կարող հավատալ, որ Նրանք կարող են քողարկել իրենց մազերը: Սակայն, ես Հետաքրքրասեր անձ եմ, այսպիսով, դասերից մեկի ընթացքում Առաջին իսկ հնարավորության դեպքում Ես ծանոթացա մի մահմեդական աղջկա հետ, Այդ մի հանդիպում էր, որը կփոխեր իմ ամբողջ կյանքը: Ես երբեք չեմ մոռանա նրան: Նրա անունը Յասմինա էր և նա Պաղեստինից էր: Ես ժամերով Նստում և լսում էի նրան, երբ նա պատմում էր ինձ իր երկրի, Մշակույթի, ընտանիքի և ընկերների մասին, ում նա շատ էր Սիրում, սակայն նրա ունեցած ամենամեծ սերը կրոնը, Իսլամն էր: Յասմինը ներքին խաղաղություն, Որը ես երբևէ չէի հանդիպել: Նա ինձ պատմում էր Մարգարեների Խ.Ա.Ո՜Ն պատմությունների և Ալլահի Եզակիության մասին: Այդ ժամանակ ես տեսա, որ Նրանք չեն երկրպագում, մեկ այլ Աստված Ուղղակի արաբերեն լեզվում, Ալլահ նշանակում է Աստված:Ինձ համար Նրա ամեն ասածը այնքան իմաստալից էր և այնքան անբիծ:....

Կաղրային գրող Պիթեր Ֆորդի Քրիստոնեական Գիտության Ազդարարի «Ինչու՞ են Եվրոպացի կանայք ընդունում են Իսլամ» զեկույցի մեջ, ֆրանսիացի մի կին բացատրեց իր Իսլամ ընդունելու դրդապատճառները .

«Իսլամը պահանջում է մոտեցում Աստծուն: Իսլամը ավելի պարզ է, ավելի խիստ և Այն ավելի հեշտ է, որովհետև այն հստակ է: Ես փնտրում էի շրջանակներ, մարդը կարիք Ունի կանոնների և վարքի օրինակի: Քրիստոնեությունը ինձ միևնույն ելքերը չէր տալիս:[81]

Հայֆա Ջավադը, Բիրմինգամի Համալսարանի ուսուցիչը, նշեց եվրոպացի կանանց իսլամ ընդունելու որոշակի պատճառները.

Ա. Շատ կանայք արձագանքում են ԱրևմտյանՀասարակության բարոյական անհավասարակշռությանը

Բ. Նրանց դուր է գալիս Իսլամի առաջարկած Պատկանելության, հոգացության և կիսելու զգացումները:

Քարին վան Նյուվերքը, ով ուսումնասիրել է դանիացի կանանց Իսլամ ընդունելը, պնդում է, որ «Իսլամում գոյություն ունեն մայրության և ընտանիքի ավելի մեծ հնարավորություն և կանայք սեռական օբյեկտներ չեն»:

Սառա Ջոզեֆը, դավանափոխ մի անգլուհի, պնդում է, որ «Այն գաղափարը, որ դավանափոխ բոլոր կանայք փնտրում են գեղեցիկ ապրելակերպ են փնտրում Արևմտյան անզսպությունից հեռու, ուղղակի ճշգրիտ չէ:»[82]

[81] Փիթեր Ֆորդ.«Ինչու են եվրոպացի կանայք ընդունում Իսլամ»: Քրիստոնյա Գիտության Ազդարար, Դեկտեմբեր 27, 2004 հրատարակչություն, էջ. 1
[82] Ֆորդ, 2004էջ. էջ. 1

Նախորդ քննարկումների մեջ ես փորձեցի տալ կնոջ ընդհանուր պատկերը, խոշոր կրոններում և ուսմունքներում, որը մեծ ազդեցություն է թողել մարդկության կյանքի վրա: Ես կարծում էի, որ այս քայլով, մենք կարող ենք ունենալ պատմական ինչպես նաև վերլուծական շրջանակներ, որի միջով մենք կարող ենք ավելի լավ հասկանալ կնոջ իրավունքները: Հետազոտությունները հիմնված էին Հինդուիզմի, Քրիստոնեության և Իսլամի բնօրինակ աղբյուրների վրա, որպեսզի հետազոտության ենթարկվի նրանց ուսմունքները, կապված կնոջ դերի և արժանի վերաբերմունքի հետ:Ես նույնպես անդրադարձա այն

ողբերգական հետևանքներին, որը կնոջ հավասարակշռված և առողջ ընտանիք և հասարակություն պահպանելու կարևոր դերի թյուրընկալման արդյունքն է: Ներդաշնակ և միավորման դերերը հանգեցրել են տղամարդկանց և կանանց կատաղի մրցակցության և անհատական ցանկություն լրացնելու եսասիրական տենչանքների, որից դուրս կանայք դառնում են մեծ պարտվողներ:

Կանանց ազատագրումը ծայրահեղ ֆեմինիզմի միջոցով և լիբերալիզմը սպառվել են ավելի շատ թշնամանքների և աշխարհում ավելացող տառապանքների պատճառով, որը կառավարում են տղամարդիկ:Իրոք, այդ այն տղամարդիկ են, ովքեր խաբում են կանանց նրանց իրենց տներից դուրս հանելով և կտրելով նրանց ընտանեկան կապերը, որպեսզի արժանանան վատ վերաբերմունքի ցածր վճարներով և անցանկալի աշխատանքներով: Նրանց տրվել է լրացուցիչ բեռ կրելու և դաստիարակելու զավակներ և հոգ տանելու ընտանիքների մասին և ստիպված դառնալու էժան աշխատուժ և ստիպված ապահովելու իրենց և իրենց ընտանիքները: Մարգարեթ Մարկուսը, այժմ, Մարիամ Ջամիիլահին կրկնել է այսպիսի հետևանքները ասելով, որ.

> .... Սակայն նույն քարոզչությունը պնդում է, որ Ազատագրկված կնոջ գերագույն պարտականությունը Դեռևս իր տունն է: Այլ կերպ, այս նշանակում է, որ Ժամանակակից կինը պետք է կրի կրկնակի բեռ: Ի լրացում Իր ապրելագումարի լիարժեք վաստակի տանից դուրս լիարժեք աշխատանքով, միևնույն ժամանակ Նա պետք է ինչ որ կերպ ներկայացնի համարյա անհնար Առաջադրանքը լրացնելու իր բոլոր

> պարտականությունները Ամուսնու և երեխաների հանդեպ և միայնակ անթերի պահպանել տուն: Արդյո՞ք սա արդար է:[83]

Երբ ակնարկում են աղետալի վիճակը, որին հասել է ընտանիքը արևմտյան և նմանատիպ հասարակությունների մեջ, առանձնապես ընտանեկան հարաբերությունների մեջ և կանանց և երեխաների ոտնահարման մեջ, ես չեմ կարծում որ այլ հասարակությունները, ովքեր հետևում են նույնատիպ սանձազերծ ազատության, հեռանալով բարոյականության և Արարիչի վավերական ուսմունքներից, այն համարում են անընկալունակ նման հիվանդությունների դեմ: Կանանց ազատագրման Շարժումը մահմեդական աշխարհում, չի կարող հանգեցնել միևնույն աղետի, ինչ արդեն տեղի է ունենցել մեկ այլ տեղ:Սանձանձակ սեռական հարաբերությունների համընդհանուր արտոնությունները, շրկի մեջ են գցում ջունգլիում գտնվող վայրի կենդանուն: Անխուսափելի արդյունքները դարձան տան ընտանիքների և իրոք,ամբողջ հասարակական շրջանակի կործանման պատճառ, ինչպես նաև անչափահասների զանցառության համաճարակի, հանցագործության և բռնությամբ լի մթնոլորտի,անկարգությունների և անօրինականության: Անցյալի քաղաքակրթությունների պատմությունը բավարար ապացույց է, որ երբ արատը և անբարոյականությունը տարածվում են, ոչ մի հասարակություն այլևս չի կարող երջանիկ կերպով գոյատևել: [84]

---

[83] Մարիամ Ջամիիլահ, 1983 էջ. 97
[84] Մարիամ Ջամիլլահ 1983, էջ. 99

Հարգելի ընթերցողին ես հրավիրում եմ հետազոտել Իսլամի ուսմունքը իրենց բնօրինակ աղբյուրներից, որ չի վերաբերում միայն կանանց այլև մարդկային կյանքի ընդհանուր առմամբ: Իսլամը կյանքի համակարգ է,որը ձևովորել է Արարիչը որպես ուղեցույց, ապահովելու մարդկությանը և հասցնելու երջանկության այս կյանքում և հետագա:

Այս գրիքը եզրահանգում ենք Իսլամական Ուսումնասիրությունների Օքսֆորդի կենտրոնի Արքայազն Չարլզի ելույթի ´´Իսլամը և Արևմուտքը´´ քաղվածից.

> Մեկ այլ ակնհայտ արևմտյան նախապաշարմունք է Դատել կնոջ դիրքը Իսլամում ծայրահեղ դեպքերով:

Մահմեդական կանանց ունեցվածքի և ժառանգության, ամուսնալաուծության դեպքում որոշակի պաշտպանության և բիզնեսի անցկացման, իրավունքները Ղուրանը սահմանել է 1400 տարի առաջ: Բրիտանիայում, դրանց անծանոթ էին ամենաքիչը նույնիսկ իմ տատիկի սերունդները:[85]

[85] Արքայազն Չարլզ «Իսլամը և Արևմուտքը» Արաբ Նորություններ, Հոկտեմբեր 27, 1993 թվ. Հիլ. Աբդուլսալամ. Կանանց Իդեալական Ազատագրում. Աբդուլ –Քասիմ Հրատարակչատուն, Ջեդդահ էջ. 41-3

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

Փառահեղ Ղուրան

Աբդուլսալամ Ռ. Հիլլ Կանանց Իդեալական Ազատագրումը, Աբդուլ-Քասիմ Հրատարակչատուն, Ջեդդահ 1993

ԱՄՆ-ի Վերացությունը, 1998 թվական, 118 հրատարակություն, 1998թվ. Հոկտեմբերի թողարկում

Ալ-Բուխարի Գիտության Գիրքը

Ալ-Քասիմ Խալեդ, Նամակ Քրիստոնյային, Դար Ալ-Վաթան, Ռիյադ 1995

Ամբեդքար, Դոկ. Բաբասահեբ Ռ. Ռամայի և Քրիշնայի Հանելուկը, Բանգալոր, 1998

Ազիզ-ուս- սամմադ, Ուլֆաթ Իսլամը և Քրիստոնեությունը, Իսլամական Հետազոտությունների Նախագահությունը, Ռիյադ 1984

BBC առցանց 2/7/2000

Բիդեն, Սենատոր Ջոսեֆ, Արդարադատության Ամերիկյան Սենատի Համձնաժողով. Բռնություններ Ընդդեմ Կանանց. Համակարգի զոհերը, 1991

Բուհլերգ, Ջորջ Մանու Օրենքը, Մոթիլալ Բանարսիդաս Դելի 1982

Չաթերջեե Դոկ. Մ.Ա. Օվ Դուք Հինդուսներ, Արթնացեք. Հնդական Հայրենասիրական Հանձնաժողով 1993

Դեյլի Մեյլ 1993 թվական, Դեկտեմբերի 2

Ֆազլի, Մ. Ջ Հնդկական Ծայրահեղականությունը և Մահմեդականները Հնդկաստանում. Աբդուլ Քասիմ Հրատարակչատուն, Ջեդդահ 1995

Ֆորդ Փիթեր «Ինչու՞ են Եվրոպացի կանայք ընդունում Իսլամ» Քրիստոնյա Գիտության Ազդարար Դեկտեմբեր 27,2004 հրատարաություն, էջ. 1

Տեղեկատվական Օրացույց.

ՋաՄիլլահ Մարիամ, Իսլամը Տեսականում և Գործնականում, Հ. Ֆարուք Ասոցիացիա, Լահոր 1983

Քենդահ, թենա, Ուղղափառ Երիտասարդության Հիշողություններ, Սուսաննա Հաշելի Հրատարակությամբ, Լինելով Հրեա Ֆեմինիստ, Նյու Յորք, Շոքեն Գրքեր 1983

Խալիլ, Եմադ Նրանք ասում են Իսլամի մասին, 1994 Իսլամական Ապազան 27 Մայիս 1994 էջ. 12

Լանգ Ջեֆրի, Պայքար Հնազանդվելու Բելթսվիլ, Մերիլանդ, Ամանա Հրատարակչություններ, 1995

Լե Բոն Գուստավ Հնդիկ Քաղաքակրթություն

Լերներ, Մաքս, Մեր Որևէ Վայր Գնացող Հասարակությունը- Ուր է Այն Գնում Ընթերցողի Ժողովածու Ապրիլ 1968

Մուսլիմ, Սահիհ Մուսլիմի Ամփոփում, Ալ- Մունթիրի, թարգմանված Դար-ՈւսՍալամ, Ռիյադ 2000

Առողջապահության Վիճակագրության Ազգային Կենտրոն, Մաքմիլան Տեսական Օրացուցյ 1996

Փիքթհալ, Մուհամմեդ Մարմադուք, Սեռերի Փոխհարաբերությունները 1925 թվականի զեկույց «Մահմեդական Կանանց խղճալի վիճակը»

Փլոզ Ֆրեդ և Դանիել Ջ. Բեյթս Մշակույթային Մարդաբանություն, Նյու Յորք Քնոփֆ 1982

Սաիդ Էդվարդ Իսլամափոխություն Վինթաժ. 1997

Եզակի օրինակներ Բ.Ջ.Ս Ազգային Հանցագործությունների Հետապնդումների Ուսումնասիրության զեկույց, «Բռնություն Ընդդեմ Կնոջ» (NCJ-145325)

Սուլիվան, Թ. Ք Թոմսոն, Ռ. Ռայթ . Ջ. Գրոսս և Դ. Սփադի Հասարակական Խնդիրներ, Տարամետ Հեռանկարներ Ջոն., ՈՒիլեր և Որդիներ, Նյու Յորք, 1980

Սվուդլեր, Լեոնարդ Ջ. Կանայք Հուդդայականության մեջ. Կնոջ կարգավիճակը ժամանակակից Հուդդայականության մեջ. Մեթուչեն Ն. Ջ. Սքեյերքրո Մամուլ, 1976, էջ. 83-93

Բաբելանյան Թալմութ Սոնկրինո Մամուլ Լոնդոն

Ավելի Լավ Վերաբերմունքի Հիմքերը, Ընդհանուր Նպատակ, Ցամայկա Փլեյն

Ընտանիքը Հունիս 1998 թողարկում 59

Ընտանիք Օգոստոս 1994, թողարկում 14

Մաքմիլան Տեսական Օրացույց 1996, ԱՄՆ-ի Վերացությունները, 118 թողարկում

http://www.twf.org/library/women ICJ.htm/

ՄԱԿ-ի զեկույցը Հնդկաստանի կանանց մասին, 1991 Ազգային Զեկույց հատոր XXVII, h ամ ար 4, դ եկ տե մ բ ե ր 1999

Ու. Ջ. Ուիլքինս Ժամանակակից Հինդուիզմը Լոնդոն 1975

Ջեղրիքլի Պրոֆ. Շաթիա Ս. Մահմեդական Կինը և Ժամանակակից Մարտահրավերները, Մաջդալավի Մամուլ Ամման 1997

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ